# «Ա ԿԼԱՍ ԼՈԳԻՍՏԻԿՍ» ՍՊԸ–ի կողմից ք.  Երևան, Էրեբունի Արին-Բերդի փող. 25 հասցեում պահեստային շինության/անգար/ կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն



«Ա ԿԼԱՍ ԼՈԳԻՍՏԻԿՍ» ՍՊԸ  տնօրեն Ռ. Գյուզալյան

Երևան 2025

**Բովանդակություն** Էջ

1.Ընդհանուր տեղեկատվություն ........ 5

2. Հավելվածներ ........ 5

3. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության կազմման իրավական հիմքերը ........ 5

4. Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ փործաքննական գործընթացների վերաբերյալ ........ 5

5. Ձեռնարկողի անվանումը, գտնվելու վայրը և նպատակը ........ 6

6. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) հաշվետվության մշակման հիմքերը ........ **Error! Bookmark not defined.**

7. Նախատեսվող գործունեության տարածքի և շրջակա միջավայրի նկարագիրը ........ 7

7.1 Ենթակա տարածք. ........ 7

7.2. Շրջակա միջավայրի բնութագրերը ........ 14

**7.2.1. Աշխարհագրական դիրքը, ռելիեֆը** ........ 14

**7.2.2. Սեյսմիկա և երկրաբանություն** ........ 15

**7.2.3. Կլիմա և օդային ավազան** ........ 16

**7.2.4. Հողային ռեսուրսներ** ........ 20

**7.2.5.Ջրային ռեսուրսներ** ........ 21

**7.2.6. Կենսաբազմազություն** ........ 22

**7.2.7. Պատմության և մշակութային հուշարձաններ** ........ 24

**7.2.8. Հատուկ պահպանվող տարածքներ** ........ 24

**7.2.9. Սոցիալ-տնտեսական** ........ 25

8. Նախատեսվող գործունեության բնութագիր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումները, օգտագործվող բնական ռեսուրսներ և նյութեր, (շինարարության շահագործման, փակման փուլեր). ........ 28

8.1.Շինարարության փուլ. ........ 28

8.2 Ժամանակացույց ........ 33

8.3. Օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր ........ 35

**8.3.1 Ջուր.** ........ 35

**8.3.2 Նյութեր.** ........ 36

**8.4 Շահագործման փուլ.** ........ 36

**8.4.1. Բնակելի համալիրի տեխնիկա-տեխնոլոգիական ցուցանիշները և լուծումները:** ........ 36

9. Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները, ռիսկերը ........ 38

(շինարարության և շահագործման փուլ) ........ 38

9.1 Օդային ավազան. 39
9.2 Հողային ռեսուրսներ. 41
9.3 Ջրային ռեսուրսներ. 41
9.4 Կենսաբազմազանություն. 41
9.5 Թափոններ. 42
9.6 Աղմուկ և թրթռում. 43
9.7 Արտակարգ իրավիճակներ. 43
9.8 Մարդու առողջության վրա հնարավոր ազդեցությունները, գործոնները, ռիսկերը. 45
9.9 Էներգախնայողություն և Էներգաարդյունավետություն. **Error! Bookmark not defined.**
9.10 Պատմամշակութային և բնության հուշարձաններ. 46
9.11 Սոցիալական. 46
9.12 Լանդշաֆտ. 47
9.13 Բարեկարգում և կանաչապատում. 47
10.Շրջակա միջավայրի, մարդու առողջության վրա վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումները 48
10.1 Օդային ավազան. 49
10.2 Հողային ռեսուրսներ. 49
Հողային ռեսուրսնեն 49
10.3 Ջրային ռեսուրսներ. 50
10.4 Թափոններ. 51
10.5 Աղմուկի և թրթռումներ. 52
10.6 Արտակարգ իրավիճակներ. 53
10.7 Մարդու առողջություն, Աշխատանքի անվտանգություն, կազմակերպում. 53
10.8 Էներգաարդյունավետություն և Էներգախնայողություն **Error! Bookmark not defined.**
10.9 Պատմամշակութային և բնության հուշարձաններ. 55
Սոցիալական գործոններ. 55
10.10 Լանդշաֆտ. 55
10.11 Բարեկարգում և Կանաչապատում 55
11. Մոնիթորինգ 56
12.Բողոքների ընթացակարգ 57
13. Բնապահպանական միջոցառումների (բնապահպանական կառավարման) պլան **Error! Bookmark not defined.**
Բնապահպանական միջոցառումների (բնապահպանական կառավարման) պլան 58
Աշխատանքի կազմակերպում, մարդու առողջություն և անվտանգություն 68
Շահագործմանն փուլ **Error! Bookmark not defined.**
14.Մշտադիտարկման (մոնիթորինգի) միջոցառումներ 73

15. Հանրային քննարկումներ.........................................................................................78

## 1.Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| ՇՄԱԳ Հաշվետվություն | «Ա ԿԼԱՍ ԼՈԳԻՍՏԻԿՍ»ՍՊԸ Երևան, Էրեբունի Արին-Բերդի փող. 25 հասցեում պահեստային շինության/անգար/ կառուցում: |
| Նախաձեռնող | |
| Փաստացի գործունեության հասցեն՝ վարչական տարածքը | Ք. Երևան, Էրեբունի Արին-Բերդի փող. 25 |
| Նախաձեռնողի հեռախոս, էլեկտրոնային փոստ | Ruben.gyuzalyan@gmail.com |
| Աշխատանքային նախագծի մշակող | |
| Գնահատման հաշվետվության նախագծող | |
| Հաշվետվության մշակող ընկերության հասցե, հեռախոս, էլեկտրոնային փոստ | |

## 2. Հավելվածներ

Հավելված 1. Տարածքի սեփականության իրավունքի վկայական, պետ.ռեգիստր
Հավելված 2. Ճարտարապետա-հատակագծային առաջադրանքը
Հավելված 3. Կադաստրային քարտեզը WGS կոորդինատներով
**Հավելված 4.** Տարածքի հատակագիծը
**Հավելված 5** «Վեոլիա ջուր» ՓԲ-ի կողմից տրված տեխնիկական պայմանը
**Հավելված 6.**Էլեկտրամատակարարման տեխնիկական պայմանը
**Հավելված 7.** Էրեբունի թաղամասի պատմամշակութային հուշարձանները
Հավելված 8. Մթնոլորտային օդ արտանետումների հաշվարկ
**Հավելված 9.** Երևան քաղաքի ավագանու որոշումը գործունեության վերաբերյալ
**Հավելված 10.**Հանրային քննարկման արձանագրություն, մասնակիցների ցանկ
**Հավելված 11.** Պետական տուրքի անդորրագիրը

## 3. Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ փորձաքննական գործընթացների վերաբերյալ

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը ՀՀ-ում իրականացվում է համաձայն՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» 2014 թվականի հունիսի 21-ի ՀՕ-110-Ն Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին (Փոփոխությունները 2023 թվականի մայիսի 3) Օրենքի (այսուհետ՝ Օրենք):

Ըստ Օրենքի՝ գործունեությունները դասակարգվում են 2՝ Ա և Բ կատեգորիաների: Օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի ա ենթակետի համաձայն՝ քաղաքաշինության ոլորտում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ենթակա են. «Քաղաքաշինական գործունեության օբյեկտների կառուցում՝ 1500 քմ և ավելի, վերգետնյա

ամենամեծ կառուցապատման մակերեսով կամ 2000 քմ եւ ավելի ստորգետնյա ամենամեծ կառուցապատման մակերեսով»:

Հաշվետվությամբ ներկայացվող գործունեությունը համաձայն Օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի ա ենթակետի՝ շրջակա միջավայրի գնահատման և փորձաքննության է ենթակա Բ կատեգորիայի ընթացակարգով:

Համաձայն Օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի Բ կատեգորիայի՝ նախատեսվող գործունեության ՇՄԱԳ հաշվետվությանը ներկայացվող պահանջներն են՝

1) նախաձեռնողի անունը (անվանումը) եւ բնակության (գտնվելու) վայրը.

2) նախատեսվող գործունեության անվանումը՝ սույն օրենքի 12-րդ հոդվածին համապատասխան.

3) նախագծային փաստաթղթով նախատեսվող գործունեության տարածքի, այդ թվում՝ շրջակա միջավայրի, բնական պայմանների, ռեսուրսների նկարագիրը, ինչպես նաեւ դրանց օգտագործման նպատակը, ենթակառուցվածքները, ազդակիր համայնքը եւ դրանց տեղադիրքն արտացոլող իրավասու մարմնի կողմից տրամադրված տարածական պլանավորման փաստաթղթերը, իրադրության սխեման կամ քարտեզը՝ Հայաստանի Հանրապետությունում գործող միասնական գեոդեզիական կոորդինատային համակարգով.

4) նախագծային փաստաթղթով նախատեսվող գործունեության բնութագիրը շինարարության, շահագործման, փակման եւ հետփակման փուլերում (արտադրական հզորություններ, օգտագործվող բնական ռեսուրսներ եւ նյութեր, տեխնիկական եւ տեխնոլոգիական լուծումներ).

5) շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները՝ շինարարության, շահագործման եւ փակման փուլերում.

6) մարդու առողջության վրա հնարավոր ազդեցությունները, գործոնները, ռիսկերը.

7) նախագծային փաստաթղթով նախատեսված բնապահպանական կառավարման պլանը.

8) հաստատված հիմնադրութային փաստաթղթերին նախագծային փաստաթղթով նախատեսվող գործունեության համապատասխանության հիմնավորումները

9) նախագծային փաստաթղթով նախատեսվող գործունեության ազդեցության մշտադիտարկման (մոնիթորինգի) ծրագիրը:

ՇՄԱԳ հաշվետվությունը կազմվել է վերը նշված պահանջներին համապատասխան:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նպատակն է նախատեսվող գործունեության՝ նախագծային փաստաթղթին և ՇՄԱԳ հաշվետվությանը համապատասխան իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունների կանխատեսումը, կանխարգելումը, նվազեցումը կամ բացառումը, ամբողջական, գումարային և գիտականորեն հիմնավորված գնահատումը:

ՇՄԱԳ հաշվետվությունը կազմվել է հիմք ընդունելով նախատեսվող գործունեության աշխատանքային նախագիծը, նախատեսվող գործունեության տարածքի ուսումնասիրության ընթացքում հավաքագրված տեղեկատվությունը, տարածքի վերաբերյալ ուսումնասիրությունների արդյունքները, քարտեզները, լուսանկարները և այլ փաստաթղթեր:

### 4. Գնահատման (ՇՄԱԳ) հաշվետվության մշակման հիմքերը, Նախաձեռնողի անվանումը, գտնվելու վայրը և նպատակը,

Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է «Ա ԿԼԱՍ ԼՈԳԻՍՏԻԿՍ»ՍՊԸ-ի կողմից Երևանի Էրեբունի վարչական շրջանի Արին-Բերդի փ. 25 հասցեում՝ սեփականության իրավունքով: ՇՄԱԳ հաշվետվության մշակման համար հիմք է ընդունվել.

- պահեստային շինության նախագծային փաստաթղթերը,

- համալիրի տեղամասի ինժիներաերկրաբանական հետազոտությունների հաշվետվությունը,
- համապատասխան համաձայնությունները և թույլտվությունները,
- սեփականության վկայականները՝ N 21042025-01-0084: Հավելված 1
-ճարտարապետահատակագծային առաջադրանքը՝ N Նթ-5847-25, տրված՝ 21.07.2025թ.: Հավելված 2

Նախատեսվող գործունեությունն իրականացնող ընկերության իրավաբանական հասցեն է՝ Երևան 0054, ք. Էրեբունի, Աթոյան փ. տ. 83:

Նախատեսվող գործունեության նպատակը. Նախատեսսվող գործունեության հողի նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական է, իսկ գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ արդյունաբերական օբյեկտների կառուցապատման:

Գործունեության իրականացման նպատակն է կառուցել պահեստային շինություն՝ անգար, որն օգտագործվելու է ոչ պայթունավտանգ պատրաստի ապրանքատեսակների՝ կահույքի, հագուստի, կենցաղային տեխնիկայի պահպանման և բեռնաթափման համար նախատեսված հատուկ մուտքեր, հատուկ զննման կայաններ և պահպանման վայրեր:

***Սանիտարապաշտպանիչ գոտի.*** Պահեստային շինությունը նախատեսվում է տարբեր տեսակի կենցաղային ապրանքների( տարբեր տեսակի կենղաղային տեխնիկա, տարբեր տեսակի հագուստ, կոշիկ, փակ տուփերով պահածոներ,) պահեստավորման համար: Համաձայն քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2024 թվականի փետրվարի 1-ի թիվ 06 հրամանի հավելվածի պահեստային շինությունը պատկանում է՝ 12-գլուխ, 12 կետին «Սանիտարատեխնիկական, տրանսպորտային և ինժեներական ենթակառուցվածքներ, սպորտի, առևտրի և սպասարկման ծառայությունների մատուցման օբյեկտների 5) V դաս «ա. պահման կարգավորող ռեժիմներ չպահանջող, մասնագիտացված, բազմաֆունկցիոնալ պահեստներ՝ սկսած 300 քմ մակերեսից») : Համաձայն նույն հավելվածի գլուխ 11. «ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԵՎ ՋԵՐՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԿԱՅԱՆՆԵՐԻ, ՊԱՀԵՍՏԱՅԻՆ ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՄԱՐ ԿՈՂՄՆՈՐՈՇԻՉ ՍԱՆԻՏԱՐԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԳՈՏԻՆԵՐԻ ՉԱՓԵՐԸ»՝ պահստային շինության սանիտապաշտպանիչ գոտին սահմանվում է որպես 5) հինգերորդ (V) դասի արդյունաբերական օբյեկտներ և արտադրություններ՝ 50 մ: Նախատեսվող շինությունը գտնվում է մոտակա բնակելի տնից 82.8մ, մոտակայքում հասարակական նշանակության շինությունները բացակայում են:

## 5. Նախատեսվող գործունեության ենթակա տարածքի և շրջակա միջավայրի նկարագիրը

**5.1.Ենթակա տարածք.** շինության կառուցապատման ենթակա տարածքը գտնվում է Երևանի Էրեբունի վարչական շրջանի Արին-Բերդի փ. 25 հասցեում: Գործունեությունն իրականացվելու է սեփականություն իրավունքով:

Համաձայն Երևան համայնքի կողմից տրված նախագծման թույլտվության կամ Ճարտարապետահատակագծային առաջադրանքի՝ հողամասի մակերեսը կազմում է 2.7151հա: Տարածքում առկա է պարիսպ՝ 9.6$մ^2$ մակերեսով: Տարածքում և կից առկա են ինժեներական գծեր, հաղորդակցուղիներ, արտադրական շինություններ, պարիսպ: Տարածքում և կից բացակայում են բնության հատուկ պահպանվող, պատմամշակութային հուշարձանները: Տարածքին մոտեցումը լինելու է Արին-Բերդ փողոցից: Նախկինում օգտագործվել է որպես արտադրական տարածք, եղել է «Արմեն Մոտորս» ՓԲԸ-ի արդյունաբերական տարածք:

Տարածքն ունի բարդ ռելիեֆ՝ 32մ ստորին և վերին նիշերի միջև տարբերությամբ: Տարածքում բացակայում են ծառերը, թփածառերը, տեղ-տեղ առկա է խոտածածկ՝ փշային թփուտների, մացառների տեսքով: Տարածքում բացակայում է հողաբուսաշերտը:

Համաձայն «Հայր և Որդի Տիտիզյաններ» ՍՊԸ կողմից 2025թ. մայիսին կատարվել է գործունեության ենթակա տարածքի ինժեներա-երկրաբանական ուսումնասիրություններ: Կատարվել է նշված և հարակից տարածքներին վերաբերվող տարբեր աղբյուրներում զետեղված, նախկինում կատարված ինժեներաերկրաբանական հետազոտումների տվյալների հավաքում,

կանոնակարգում, համադրում և վերլուծություն: Փորվել են 10 հորատանցքներ 3-ը՝ 8.0գծ/մ խորությամբ, 7-ը՝ 5գծ/մ խորությամբ: Հորատանցքների հիման վրա կազմվել է երկրաբանա-լիթոլոգիական կտրվածք, ինչպես նաև օգտագործվել են ֆոնդային տվյալները:Հորատանցքների, արդյունքները և ֆոնդային նյութերի տվյալները թույլ են տալիս շերտերի նկարագրությունը տալ մինչև 8,0մ խորությամբ՝ համաձայն ըստ ՇՆՁ I-2.101-2002 (ձեռնարկ ՀՀՇՆ I-2.01-99 նորմերի):

Նկար 1










Ֆիզիկա-աշխարհագրական պայմանները. Հետախուզվող տարածքը գտնվում է Երևան քաղաքի հարավ-արևելյան մատույցներում և Արարատի մարզի հյուսիս-արևելյան հատվածում, որը իրենից ներկայացնում է գրեթե հարթ տարածք, թեքությամբ դեպի արևմուտք: Տարածքին բնորոշ է, նաև թույլ արտահայտված փոսորակները: Հիմնական ջրատար հորիզոններ ուսումնասիրվող տեղամասի մակերևույթում չկան: Հորդառատ անձրևների ժամանակ հնարավոր է ոչ մեծ մասշտաբի հոսքեր արևելքից արևմուտք:

Գեոմորֆոլոգիական տեսակետից Գեոմորֆոլոգիական տեսակետից տարածաշրջանը տեղադրված է լճա- կուտակումային Արարատյան հարթավայրի սահմաններում: Մակերեսը հարթ է, աննշան թեքությամբ դեպի հարավ-արևելք, Արաքս և Վեդի գետերի կողմը:

Արարատյան գոգահովիտն իրենից ներկայացնում է միջլեռնային իջվածք, որը կապված է Արաքս գետի հովտի հետ, իր Ախուրյան, Սևջուր, Քասախ, Հրազդան, Ազատ, Վեդի վտակներով, որոնց արտաբերման կոներով և լավատակ հնանուներով էլ սնվում է Արարատյան ստորերկրյա ջրերի ավազանը:

Երկրաբանատեկտոնական պայմանները. Ուսումնասիրվող շրջանը երկրաբանական տեսակետից ներկայացված է միոցենային նստվածքներով, որոնք հանդես են գալիս Շորաղբյուրի (Շորբուլաղի) անտիկլինալի հյուսիս-արևմտյան թևում: Միոցենը կազմված է երկու շերտից կարմրավուն և գիպսատար: Կարմրավուն նստվածքների հզորությունը ներկայացված է կարմրա-շագանակագույն և շագանակագույն կավերով, կանաչավուն մոխրագույն կավային ավազներով: Նախկին տարիներին կատարված երկրաբանական ուսումնասիրման հիման վրա կարմրավուն կավերի հզորությունը բավականին մեծ է: Տեկտոնական տեսակետից ուսումնասիրվող տարածքը տեղադրված է Շորաղբյուրի (Շորբուլաղի) խոշոր անտիկլինալի հյուսիս արևմտյան թևի վրա, որի կազմի մեջ հանդես են գալիս էոցենային, օլիգոցենային և միոցենային նստվածքները: Վերջինիս պատկանում է կարմրավուն և գիպսատար շերտը: Շորաղբյուրի անտիկլինալը ներկայացված է ակկումուլիատիվ ծալքերով ձգված հյուսիս-արևելյան ուղղությամբ:
Շորաղբյուրի անտիկլինալը Արարատյան դաշտի տեղամասում ներկայացված է էոցենային և օլիգոցենային ապարներով, որոնք մերկանում են անտիկլինալի կենտրոնում և եզրերում Ողջաբերդ և Շորաղբյուր գյուղերի մատույցներում, իսկ հարավ արևմուտք, այսինքն Երևանի ՋԷԿ ենթակայանի հատվածում աստիճանաբար խորանում են և ծալքի հիմքում մնում են միայն կարմրավուն և երփներանգ շերտերը, որտեղ էլ գտնվում է մեր ուսումնասիրվող տարածքը:

Կլիման. Ուսումնասիրվող գոտին համաձայն «Շինարարական կլիմայաբանության» (ՀՀՇՆ22.01.24 )-ի գտնվում է «տաք կլիմայական շրջանում: Շրջանը ունի ցուրտ ձմեռով և շոգ ամառով, չոր, խիստ ցամաքային կլիմա: Տարվա մեջ գերակշռում են հարավային և հարավ-արևմտյան ուղղության քամիները:25 տարվա ընթացքում հնարավոր են 22մ/վրկ, 50 տարվա մեջ 27մ/վ ուժգնության քամիներ: Ձյան ծածկույթի հաստությունը հասնում է 50սմ: Կայուն ձյան ծածկույթ չի ձևավորվում:: Բնահողի սառչելու առավելագույն խորությունը հասնում է 60սմ:

Հիդրոերկրաբանական տեսակետից ուսումնասիրվող տարածքը հարում է Արարատյան գոգավորությանը, որը իրենից ներկայացնում է տիպիկ փակ միջլեռնային արտեզյան ավազան՝ ստորերկրյա ջրերի բեռնաթափման ու կուտակման գոտի: Արարատյան արտեզյան ավազանն ունի բարդ տեկտոնական և երկրաբանա-հիդրոերկրաբանական կառուցվածք: Ստորերկրյա ջրերի հոսքերը ձևավորվում են մթնոլորտային տեղումների, կոնդենսացիոն և մասամբ էլ մակերևույթային ջրերի հաշվին: Առանձնացվում են ստորերկրյա ջրերի երկու ջրատար հորիզոններ (համալիրներ) `գրունտային և պայմանականորեն երկու ճնշումային: Գրունտային ջրերն տարածված են գրեթե ամենուրեք և տեղադրված են 0,5-60,0մ: Ջրերի շարժման ուղղությունը համընկնում է Արարատյան դաշտի անկման ուղղության հետ և ուղղված է դեպի Արաքս գետը: Գրունտային ջրերի հորիզոնները կապված են չորրորդական հասակի ավազակավային, կավավազային, ավազային և նստվածքների հետ: Ուսումնասիրվող տարածքում՝ ըստ հորատված հորատանցների, գրունտային ջրերը հիմնականում 15.0 մ-ից ցածր խորությունների միջակայքերում են գտնվում:

Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթներ ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ ուսումնասիրվող տեղամասում նախագծվող կառույցի վրա՝ բացակայում են:

Շրջանի սեյսմիկ պայմանները.Ըստ սեյսմիկ հատկության՝ ՀՀՇՆ -20.04.2020թ.-ի, տեղազննվող շրջանը գտնվում է II սեյսմիկ գոտում՝ գրունտների Amax= 0.4g արագացմամբ:

Տարածքի երկրաբանալիթոլոգիական կառուցվածքը. Համաձայն կատարված ուսումնասիրությունների, հորատման տվյալների, արխիվային նյութերի տվյալների համադրմամբ, գրունտների լաբորատոր ուսումնասիրությունների՝ ուսումնասիրվող տեղամասի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են հետևյալ գրունտերից վերևից–ներքև: Երկրաբանալիթոլոգիական կտրվածքին մասնակցում հետևյալ 3 շերտերը:

Շերտ 1.- Միջին տոփանվանվածության և ամրացվածության լիցք. Ներկայացված է տարբեր ապարների թույլ գնդավորված խճաքարա-խճավազային նստվածքներով մոտ 15-30% խառնավազա-կավավազային լցանյութով:

Շերտի հզորությունը  0.8-5.0մ
Տեսակարար կշիռը    2.6-7 գ/սմ$^3$
Բնական խոնավությունը  19 %
Ծավալային կշիռը   1.8  գ/սմ$^3$
Կմախքի ծավալային կշիռը  1.43 գ/սմ$^3$
Ծակոտկենությունը 46 %
Ծակոտկենության գործակիցը   0.87
Ներքին շփման անկյունը    24 0
Շաղկապման ուժը   0.015 կգ/սմ$^2$
Դեֆորմացիայի մոդուլը 110-130 կգ/սմ$^2$
Թույլատրելի լարումը  մինչև 1.5կգ/սմ$^2$
Սեյսմիկ կարգը  III: Շինարարական մշակման խումբը  (ՀՀՇՆ 32-01-2022-ի աղյուսակ 101)-12- IV կարգ:

Շերտ 2.-  Տարբեր ապարների թեթևակի գնդավորված  մանրախճա-խճաքարային և մոխրա-դարչնագույն կավավազների 5-15սմ հզորություն ունեցող իրար հաջորդող դարսաշերտեր:
Շերտի հզորությունը  3.0-6.5մ
Տեսակարար կշիռը 2.68 գ/սմ$^3$
Բնական խոնավությունը 22 %
Ծավալային կշիռը  1.7 գ/սմ3
Կմախքի ծավալային կշիռը 1.39 գ/սմ$^3$
Ծակոտկենությունը 48 %
Ծակոտկենության գործակիցը   0.93
Ներքին շփման անկյունը    22 0
Շաղկապման ուժը   0.025 կգ/սմ$^2$
Դեֆորմացիայի մոդուլը 80-100 կգ/սմ$^2$
Թույլատրելի լարումը մինչև 1.2 կգ/սմ$^2$
Սեյսմիկ կարգը  III:Շինարարական մշակման խումբը  9 5  III կարգ:

Շերտ 3.-Օխրա-դարչնագույն, թույլ խոնավ, փոշենման կավավազներ մոտ 10%  կոպիճի պարունակությամբ :
Շերտի հզորությունը  2.0-4.6մ
Տեսակարար կշիռը 2.71 գ/սմ$^3$
Բնական խոնավությունը 28 %
Ծավալային կշիռը  1.8 գ/սմ$^3$
Կմախքի ծավալային կշիռը 1.41 գ/սմ$^3$
Պլաստիկության թիվը  6
Ծակոտկենությունը 48 %
Ծակոտկենության գործակիցը   0.92
Ներքին շփման անկյունը    20 0
Շաղկապման ուժը   0.15 կգ/սմ$^2$
Դեֆորմացիայի մոդուլը 60-80 կգ/սմ$^2$
Թույլատրելի լարումը մինչև 1.0կգ/սմ$^2$
Սեյսմիկ կարգը  III: Շինարարական մշակման խումբը  34 3  II կարգ:

Ուսումնասիրվող տեղամասում նախագծվող շինություն կառուցելու համար, ապահովելով գրունտերի միասեռությունը, որպես հիմնատակ առաջարկվում է

- շերտ 1-ը /միջին տոփանվածության լիցքեր /, որի սեյսմիկ հատկությամբ ըստ (ՀՀՇՆ 20.04.2020թ-ի)  3-րդ կարգ են:
  - ✓ Դիմադրությունը $R_0$= 1.5կգ/սմ$^2$
  - ✓ Ընկրկելիության գործակիցը $K_ը$ =2500 տ/մ$^3$
- շերտ 2-ը /մանրախճա-խճաքարային և կավավազային դարսաշերտեր /, որի սեյսմիկ հատկությամբ ըստ (ՀՀՇՆ 20.04.2020թ-ի)  3-րդ կարգ են:
  - ✓ Դիմադրությունը $R_0$= 1.2կգ/սմ$^2$
  - ✓ Ընկրկելիության գործակիցը $K_ը$ =2000 տ/մ$^3$

- շերտ 3-ը /փոշենման կավավազներ /, որի սեյսմիկ հատկությամբ ըստ (ՀՀՇՆ 20.04.2020թ-ի) 3-րդ կարգ են:
    - ✓ Դիմադրությունը $R_0$= 1.0կգ/սմ$^2$
    - ✓ Ընկրկելիության գործակիցը $K_ը$ =2000 տ/մ$^3$

**Եզրահանգում:** Ինժեներաերկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանները բարենպաստ են շինարարական աշխատանքներ կատարելու համար:

Իրադրության սխեմա Գծապատկեր 1



Իրավիճակային հատակագիծ՝ հեռավորություններով



## 5.2.Շրջակա միջավայրի բնութագրերը

### 5.2.1. Աշխարհագրական դիրքը, ռելիեֆը

Երևան քաղաքը գտնվում է ծովի մակարդակից 830-ից մինչև 1550 մետր բարձրությունների վրա՝ Արաքսի Հրազդան վտակի ափին, Արարատյան դաշտի հյուսիս-արևելքում՝ հյուսիսային լայնության 40° 04' - 40° 14' և արևելյան երկայնության 44° 23' - 44° 37' միջև, երիտասարդ հրաբխային ու նստվածքային ապարներից կազմված 7-8-բալանոց սեյսմիկ և չորրորդ ժամային գոտիներում: Առավելագույն երկարությունը հյուսիսից հարավ 19,7 կմ է, արևմուտքից արևելք՝ 19,1 կմ: Կլիմային բնորոշ են տաք, չոր ամառներ և համեմատաբար կարճ, բայց ցուրտ ձմեռներ: Երևանը գտնվում է բարեխառն գոտու ցամաքային հատվածում, շրջապատված լեռներով ու լեռնաշղթաներով:

Նկար 3.




Երևան քաղաքի տարածքը գտնվում է ծովի մակարդակից 830մ-ից (հարավ-արևմտյան մաս) 1550.0մ (հյուսիս-արևելյան մաս) բարձրության վրա: Երևան քաղաքի տարածքի գետային համակարգը ներառում է Հրազդան գետը, որը հոսում է հյուսիս-արևելքից, Գետառ գետը, որը հոսում է հյուսիս-արևելքից և միանում Հրազդան գետին Էրեբունի համայնքում, Ջրվեժ և Շորաղբյուր գետերը, որոնք ցած են հոսում արևելյան լեռնաշղթայից և միանում Գետառ գետին: Երևան քաղաքի տարածքը բաժանվում է ռելիեֆի չորս տեսակների, որոնք են՝

1) Եղվարդի հրաբխային սարահարթը, Կոտայքի հրաբխային սարահարթը և Ջրվեժ-Նորք
2) հրաբխային սարահարթը ,
2) Շորաղբյուր-Նուբարաշեն թեք հարթությունը և Էրեբունի լեռնաշղթան,
3) Հրազդան, Գետառ և Շորաղբյուր գետերի գետային հարթավայրը

4) Մշակված հողերը:

Նկար 4.




Երևան քաղաքի տարածքում ամենահին երկրաբանական միավորը Ստորին-Միջին Օլիգոցեն ժամանակաշրջանի Շորաղբյուրի շերտախումբն է (P3 1 sh), իսկ ամենաերիտասարդը Յոլոցեն ժամանակաշրջանի (վերջին ժամանակաշրջանը) ողողահունի նստվածքներն են:

**Ֆիզիկաաշխարհագրական պայմանները.** Երևան քաղաքը գտնվում է Արարատյան դաշտի հյուսիս-արևելյան մասում, չոր տափաստանային՝ կիսաանապատների տարրերով, լանդշաֆտային գոտում:

Երևան քաղաքի երկրաբանական կառուցվածքին մասնակցում են վերին պլիոցենից մինչև ժամանակակից հասակի նստվածքների համախմբեր, որոնք հիմնականում ներկայացված են հրաբխային, հրաբխա-նստվածքային փացիաներով:

Ժամանակակից ռելիեֆի ձևավորման պատմությունը սկսվում է վերին պլիոցենի ժամանակներից, երբ միոցենի նստվածքների հողմնահարված, էրոզիոն-դենուդացիոն մակերեսին սկսվել են տեղադրվել վերին պլիոցենի հասակի հրաբխային ապարներ, ինչպես նաև չորրորդական և ժամանակակից առաջացումներ:

**5.2.2. Սեյսմիկա և երկրաբանություն**

Երևան քաղաքի տարածքում ամենահին երկրաբանական միավորը Ստորին-Միջին Օլիգոցեն ժամանակաշրջանի Շորաղբյուրի շերտախումբն է (P3 1 sh), իսկ ամենաերիտասարդը՝ Յոլոցեն ժամանակաշրջանի (վերջին ժամանակաշրջանը)

ողողահունի նստվածքներն են:

**Շրջանի սեյսմիկ պայմանները.** Ըստ սեյսմիկ հատկության՝ ՀՀՇՆ-20.04.2020թ.-ի, տեղազննվող շրջանը գտնվում է II սեյսմիկ գոտում՝ գրունտների Amax=0.4g արագացմամբ, 9 և ավելի բալլ սեյսմիկությամբ:

Նկար 5




### 5.2.3. Կլիմա և օդային ավազան

Երևանը գտնվում է բարեխառն գոտում՝ ցամաքային կլիմային բնորոշ հատկանիշերով: Դրա շնորհիվ այստեղ պարզ արտահայտվում են տարվա բոլոր չորս եղանակները: Ձմեռները ցուրտ են, երբեմն՝ ձնառատ: Ամռանը հիմնականում շոգ է, չորային: Տեղումների հիմնական մասը լինում է գարնանը, մասամբ՝ աշնանը: Կլիման կիսաչոր է: Տեղումների սակավությանը զուգահեռ՝ շատ են արևային ժամերը, երկինքը պարզ է՝ հիմնականում ամբողջ տարին: Մառախլապատ կամ ամպամած եղանակը, հատկապես ամռանը հազվադեպ երևույթ է:

Գործունեության ենթակա տարածքի կլիմայական բնութագրի համար հիմք է ծառայել ՀՀ քաղաքաշինության նախարարության ՀՀՇՆ 22-01-2024 «Շինարարական կլիմայաբանություն» նորմատիվային փաստաթուղթը՝ Երևան քաղաքի՝ Էրեբունի վարչական շրջանի համար: Երևան քաղաքը գտնվում է ծովի մակարդակից 1113մ բարձրության վրա, գործունեության տարածքը՝ 942մ բարձրության վրա, գտնվում է տաք կլիմայական գոտում: Առավելագույն ջերմաստիճանը կազմում է մոտ $42^{0}$C, ամենացուրտը՝ -$28^{0}$C: Քամու ամսական միջին արագությունը կազմում է 0.7-2,8մ/վ: Մթնոլորտային տեղումների տարեկան առավելագույն քանակը կազմում է 291մմ, միջին տարեկան հարաբերական խոնավությունը՝ 61%: Գրունտի սառչման առավելագույն

խորությունը 60սմ է:

Աղյուսակ 1.

## Օդի միջին ջերմաստիճանը, $^{0}C$

ՕԴԻ ՄԻՋԻՆ ԵՎ ԷՔՍՏՐԵՄԱԼ ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆԸ,

ՁՄՌԱՆ ՍԿԻԶԲԸ, ՎԵՐՋԸ ԵՎ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Աղյուսակ 1 **Օդի միջին ջերմաստիճան**

| Բնակավայրի անվանումը | Միջին ջերմաստիճանն ըստ ամիսների, °C | | | | | | | | | | | | Միջին տարեկան, °C | Բացարձակ նվազագույն, °C | Բացարձակ առավելագույն, °C |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Հունվար | Փետրվար | Մարտ | Ապրիլ | Մայիս | Հունիս | Հուլիս | Օգոստոս | Սեպտեմբեր | Հոկտեմբեր | Նոյեմբեր | Դեկտեմբեր | | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 |
| 23. Երևան «Էրեբունի» | -3.6 | -1.0 | 5.3 | 12.5 | 17.4 | 21.8 | 25.8 | 25.2 | 20.5 | 13.3 | 6.3 | -0.2 | 11.9 | -28 | 42 |

## Օդի հարաբերական խոնավությունը

Աղյուսակ 2.

ՕԴԻ ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԽՈՆԱՎՈՒԹՅՈՒՆԸ

Աղյուսակ 10 **Օդի հարաբերական խոնավությունը**

| Բնակավայրի անվանումը | Օդի հարաբերական խոնավությունը, % | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | ըստ ամիսների | | | | | | | | | | | | Միջին տարեկան | Ամենացուրտ ամսվա օդի հարաբերական խոնավությունը, % | | Ամենատաք ամսվա օդի հարաբերական խոնավությունը, % | |
| | Հունվար | Փետրվար | Մարտ | Ապրիլ | Մայիս | Հունիս | Հուլիս | Օգոստոս | Սեպտեմբեր | Հոկտեմբեր | Նոյեմբեր | Դեկտեմբեր | | Միջին ամսական | Միջին ամսական, ժամը 15-ին | Միջին ամսական | Միջին ամսական, ժամը 15-ին |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 |
| 18. Երևան «Էրեբունի» | 79 | 75 | 62 | 56 | 57 | 49 | 45 | 46 | 49 | 62 | 73 | 79 | 61 | 79 | 67 | 45 | 28 |

## **Մթնոլորտային տեղումները**

Աղյուսակ 3

ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՏԵՂՈՒՄՆԵՐԸ

Աղյուսակ 12 **Մթնոլորտային տեղումները**

| Բնակավայրի անվանումը | Տեղումների քանակը (միջին ամսական / օրական առավելագույն), մմ — ըստ ամիսների | | | | | | | | | | | | | Տեղումների քանակը նոյեմբեր-մարտ ամիսներին, մմ | Տեղումների քանակը ապրիլ-հոկտեմբեր ամիսներին, մմ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Հունվար | Փետրվար | Մարտ | Ապրիլ | Մայիս | Հունիս | Հուլիս | Օգոստոս | Սեպտեմբեր | Հոկտեմբեր | Նոյեմբեր | Դեկտեմբեր | Տարեկան | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 |
| 22. Երևան «Էրեբունի» | 24 | 23 | 32 | 35 | 45 | 23 | 11 | 8 | 12 | 29 | 28 | 21 | 291 | 128 | 163 |
| | 24 | 23 | 34 | 29 | 42 | 34 | 29 | 37 | 51 | 35 | 36 | 28 | 51 | | |

## **Քամի**

Աղյուսակ 4.

Աղյուսակ 15 **Քամի** (արդիականացման ենթակա)

| Բնակավայրի անվանումը | Ամիսներ | Կրկնելիությունը, % / Միջին արագությունը, մ/վ ըստ ուղղությունների | | | | | | | | Անդորրի կրկնելիությունը, % | Միջին ամսական արագությունը, մ/վ | Գերակշռող ուղղությունը հունիս - օգոստոս ամիսներին | Միջին արագություններից նվազագույնը ըստ ուղղությունների հուլիսին, մ/վ | Գերակշռող ուղղությունը դեկտեմբեր - փետրվար ամիսներին | Միջին արագություններից առավելագույնը ըստ ուղղությունների հունվարին, մ/վ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Հյուսիսային | Հյուսիս-արևելյան | Արևելյան | Հարավ- արևելյան | Հարավային | Հարավ-արևմտյան | Արևմտյան | Հյուսիս-արևմտյան | | | | | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 |
| 18. Երևան «Էրեբունի» | հունվար | 4 | 9 | 11 | 14 | 21 | 25 | 12 | 4 | 76 | 0.7 | Հվ | 2.4 | Հվ | 2.7 |
| | | 2.2 | 2.2 | 2.2 | 2.9 | 2.7 | 2.3 | 2.6 | 2.7 | | | | | | |
| | ապրիլ | 7 | 14 | 8 | 16 | 20 | 16 | 13 | 6 | 45 | 1.9 | | | | |
| | | 3.1 | 3.2 | 2.8 | 4.0 | 3.1 | 3.0 | 3.8 | 3.6 | | | | | | |
| | հուլիս | 17 | 28 | 4 | 9 | 17 | 13 | 8 | 4 | 36 | 2.8 | | | | |
| | | 5.2 | 5.7 | 2.8 | 2.7 | 2.4 | 2.7 | 2.9 | 4.3 | | | | | | |
| | հոկտեմբեր | 6 | 18 | 10 | 10 | 21 | 20 | 10 | 5 | 63 | 1.0 | | | | |
| | | 2.9 | 2.5 | 2.1 | 2.5 | 2.3 | 2.4 | 2.9 | 3.5 | | | | | | |

Նկար 6.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՇՐՋԱՆԱՑՈՒՄԸ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ




**Օդային ավազան.**

Մթնոլորտային օդի աղտոտման հիմնական աղբյուրներ են հանդիսանում տրանսպորտը, արդյունաբերությունը, էներգետիկան, քաղաքաշինությունը: Փոշով աղտոտվածություն կարող է առաջանալ արդյունաբերական գործընթացների, տրանսպորտային միջոցների, ճանապարհային փոշու, շինարարության, գյուղատնտեսական և այլ գործողությունների հետևանքով: Ծծմբի երկօքսիդը մթնոլորտային օդում առաջանում է ծծումբ պարունակող վառելիքների այրման, ինչպես նաև արդյունաբերական այլ գործընթացների ժամանակ:

Մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի առաջացման գլխավոր աղբյուրն ավտոտրանսպորտն է: Հայաստանի հանրապետության տարածքում օդային ավազանի աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից : Մթնոլորտային օդի որակի գնահատումը կատարվում է ՀՀ կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի N 160-Ն որոշմամբ հաստատված աղտոտիչների սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների (ՍԹԿ) հետ համեմատությամբ:

Համաձայն Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի 2024թ. Երևան քաղաքի օդային ավազան աղտոտող նյութերի միջին հնգամյա ֆոնային

կոնցենտրացիաները սահմանվել են.

Ազոտի երկօքսիդ՝ 0.026 մգ/մ$^3$

Ծծմբի երկօքսիդ՝ 0.017 մգ/մ$^3$

Ածխածնի օքսիդ՝ 1.5 մգ/մ$^3$

Փոշի՝ 0.142 մգ/մ$^3$

Երևան քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի և գետնամերձ օզոնի դիտարկումներ: Քաղաքում գործում է 45 շարժական դիտակետ և 5 անշարժ դիտակայան համաձայն՝ Գլխավոր (armmonitoring.am) էլեկտրոնային կայք էջի:

Համաձայն տեղեկագրի՝ 2-րդ եռամսյակի ընթացքում փոշու օրական կոնցենտրացիան գերազանցել է ՍԹԿ-ն 1.1-6.3 անգամ (59 օր), իսկ ազոտի երկօքսիդի օրական կոնցենտրացիան 1.1-1.7 անգամ (46 օր): Ծծմբի երկօքսիդի և գետնամերձ օզոնի միջին օրական և ամսակա կոնցենտրացիաները երեք ամիսներին չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:

**5.2.4. Հողային ռեսուրսներ**

Երևան քաղաքը գտնվում է Արարատյան դաշտավայրի հյուսիս-արևելյան մասում, չոր տափաստանային՝ կիսաանապատների տարրերով լանդշաֆտային գոտում: Երևանի հողերը տիպիկ գորշ, կիսաանապատային են՝ սննդանյութերով աղքատ, հարուստ կարբոնատներով: Այս տիպի հողերը սակավազոր են, ունեն կավավազային կազմ, աչքի են ընկնում կմախքային զանգվածների մեծ պարունակությամբ և քարքարոտությամբ, որի հետևանքով էլ բույսերի աճն ու զարգացումը ընթանում է զգալի դժվարություններով:

Տարածաշրջանում հանդիպում են հողածածկի հետևյալ տիպերը.

• Բաց շագանակագույն, խճաքարային, տեղ-տեղ կարբոնատային ցեմենտացած,

• Կիսաանապատային գորշ, խճաքարային տեղ-տեղ կարբոնատային,

• Պլեռիհիդրոմորֆ կապակցված մնացորդային ալկալիացած աղակալած:

Նկար 7




Հողային ծածկույթի համար վտանգավոր աղտոտիչներ են համարվում ծանր մետաղները, որոնք առաջանում են գործարանների, գյուղատնտեսության, տրանսպորտի գործունեությունից, դրանց գործունեության հետևանքով առաջացող արդյունաբերական և կենղաղային թափոններից: Հողերի որակի գնահատումներն իրականացվում է ՀՀ առողջապահության նախարարի 2010թ. հունվարի 25-ի «Հողի որակին ներկայացվող պահանջներ N 2.1.7.003-10 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին» N01-Ն հրամանի Հավելված 3-ին համապատասխան:

Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի 2024 թվականի տարեկան ամփոփ և 2025 թվականի 1-ին եռամսյակի տեղեկագրերում բացակայում են Երևան քաղաքի հողային ռեսուրսների աղտոտվածության վերաբերյալ տեղեկատվությունը:

Համաձայն «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի 2021թ. 4-րդ եռամսյակում կատարված ուսումնասիրությունների արդյունքների՝ Երևան քաղաքում ուսումնասիրված հողերում վանադիումի պարունակությունը գերազանցում է համապատասխան ՍԹԿ-ն՝ 1.4-1.8 անգամ, քրոմի պարունակությունը՝ 13.8-28.8 անգամ, նիկելի պարունակությունը՝ 18.3-25.3 անգամ, պղնձի պարունակությունը՝ 19.0-34.7 անգամ, ցինկի պարունակությունը՝ 4.6-38.7 անգամ, արսենի պարունակությունը՝ 5.5-11.0 անգամ և կապարի պարունակությունը՝ 1.3-12.2 անգամ:

### 5.2.5.Ջրային ռեսուրսներ

2025 թվականի 2-րդ եռամսյակում Հրազդանի ՋԿՏ-ում հիդրոլոգիական դիտարկումներ են իրականացվել 20 դիտակետերում:

Համաձայն ՀՀ շրջակա միջավայրի մոնիթորինգի տեղեկագրի՝ 2025թ. 2-րդ եռամսյակում գետերում կատարված դիտարկումների արդյունքների՝ Հրազդան գետի ջրի որակը Քաղսի գյուղից ներքև և Արզել գյուղից ներքև հատվածներում

ապրիլին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), հունիսին՝ «միջակ» (3-րդ դաս), Արզնի ՀԷԿ-ից վերև հատվածում ջրի որակը ապրիլին և հունիսին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), Երևանից ներքև՝ Դարբնիկ գյուղի մոտ՝ ապրիլին՝ «անբավարար» (4-րդ դաս), մայիսին և հունիսին՝ «վատ» (5-րդ դաս), գետաբերանի հատվածում ջրի որակը ապրիլին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), մայիսին՝ «անբավարար» (4-րդ դաս), Գեղանիստ գյուղի մոտ ջրի որակը ապրիլին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), մայիսին՝ «միջակ» (3-րդ դաս), հունիսին՝ «վատ» (5-րդ դաս), Երևանյան լճի մուտքի մոտ՝ ապրիլին՝ «վատ» (5-րդ դաս), մայիսին՝ «անբավարար» (4-րդ դաս):

**Հիդրոերկրաբանական տեսակետից** տարածաշրջանում գրունտային ջրերի տեղամասերը գտնվում են ցածր հորիզոնների վրա, քանի որ հրաբխածին կազմավորումները բնութագրվում են ճեղքավորվածությամբ: Համայնքի տարածքի հիդրոերկրաբանական պայմանները հիմնականում բարենպաստ են:

**5.2.6. Կենսաբազմազություն**

Երևան քաղաքը գտնվում է Արարատյան դաշտավայրի հյուսիս-արևելյան մասում, չոր տափաստանային՝ կիսաանապատների տարրերով, լանդշաֆտային գոտում, շրջապատված է լեռներով ու լեռնաշղթաներով:

Նկար 9




**Բուսական աշխարհ**. Երևանի ֆլորիստիկ շրջանի բուսականությունը օշինդրա-կիսաանապատային է վաղանցիկ կամ էֆեմերային բուսատեսաների գերակշռությամբ: Երևանյան լանդշաֆտի ամենաբնորոշ առանձնահատկությունն այն է, որ այստեղ բնականորեն չեն աճում ծառա-բույսեր, բացառությամբ մի քանի կիսաթփերի: Հետևաբար Երևանում ծառերն ու թփերը կարելի է աճեցնել միայն ոռոգման առկայությամբ:

Երևանյան լանդշաֆտում հանդիպում են բուսական համակեցությունների հետևյալ 2 ենթատիպերը՝

1.Ֆրիգանա (ժայռային բուսականություն),

2. Տոմիլյար (անապատային):

Տարածքներին բնորոշ են հիմնականում կիսաանապատային բուսականության պետրոֆիլ տարբերակները, օշինդրա-էֆեմերային և հալոֆիլ, պսամոֆիլ անապատային բուսատեսակները:

**Կենդանական աշխարհ.** Տարածաշրջանում կենդանական աշխարհը ներկայացված է գերազանցապես անապատային և կիսաանապատային լանդշաֆտներին բնորոշ տեսակներով: Բնական լանդշաֆտների ֆաունան բազմազան է, այստեղ հանդիպում են՝ կաթնասունների շուրջ 20 տեսակ:

Թռչուններից հանդիպում են շուրջ 100 տեսակ, որոնց մեծ մասը բնադրում են:

Սողուններից հանդիպում են շուրջ 20 տեսակ, երկկենցաղներից հայտնի է 4 տեսակ: Երկկենցաղներից հանդիպում է լճային գորտը, սիրիական սխտորագորտը, կանաչ դոդոշը, մողեսներից՝ կլորագլխիկը, օձագլխիկը և երկարատո սցինկը, օձերից՝ կույր օձուկը: Բազմազան են թռչունները և միջատները: Թիթեռներից բնորոշ են սատիրները, խոշոր առագաստաթիթեռներ:

Բնական լանդշաֆտներում բազմաթիվ են անողնաշարավոր կենդանիները: Առավել ուսումնասիրված են բզեզները, հայտնի է մոտ 500 տեսակ: Այլ միջատներից հայտնի են շուրջ 60 երկթև, 40 թաղանթաթևավոր, 130 թիթեռներ, 10-ից 20 տեսակ ուղղաթևեր, սարդեր, փափկամարմիններ, մոտ 30 տեսակ վահանակրեր և տզեր:

Հանդիպում է «Սովորական երկարաթև չղջիկը», որը գրանցված է ՀՀ Կարմիր գրքում:

Դիտարկվող տարածքում և նրա հարակից տարածքներում արդեն իսկ առկա է մարդկային գործոնը, առկա է տրանսպորտային երթևեկություն, մեքենաների շարժ և աղմուկ, ինչի պարագայում կենդանատեսակների և բուսատեսակների հանդիպելը գրեթե բացառվում է:

### 5.2.7. Պատմության և մշակութային հուշարձաններ

Համաձայն ՀՀ կառավարության 2007թ. մարտի 15-ի «ՀՀ պետական սեփականություն համարվող եվ օտարման ոչ ենթակա պատմության եվ մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին» N 385-Ն որոշման՝ Երևան քաղաքի Էրեբունի վարչական տարածքի համար սահմանվում է հուշարձանների հետևյալ ցանկը՝ հավելված 7:

Հայաստանի հանրապետության պետական սեփականություն համարվող և օտարման ոչ ենթակա պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների Երևան քաղաքի պետական ցուցակը ներառում է 512 հուշարձան՝ 245 պահպանական միավորով:

Գործունեությունն իրականացվելու է գոյություն ունեցող արտադրական տարածքում, որտեղ բացակայում են պատմամշակութային հուշարձանները:

### 5.2.8. Բնության հուշարձաններ.Հատուկ պահպանվող տարածքներ

ՀՀ Կառավարության 2008թ. օգոստոսի 14-ի N967-Ն որոշման համաձայն՝ Երևան քաղաքում առկա են հետևյալ բնության հուշարձանները.

Աղյուսակ 5.

| | | |
|---|---|---|
| 1 | «Անանուն» սյունաձև բազալտներ | քաղ. Երևան, Հրազդանի կիրճի ձախափնյա մասում, Սբ. Սարգիս եկեղեցու մոտ |
| 2 | «Անանուն» սյունաձև բազալտներ | քաղ. Երևան, Հրազդանի կիրճի ձախափնյա մասում մանկական ե/գ տանող թունելի արևմտյան ճակատամուտքի մոտ |

Աղյուսակ 6.

| | | | |
|---|---|---|---|
| Երևանի բուսաբանական այգի |  | 0.8 քկմ | 1935 |
| Էրեբունի արգելոց |  | 1.2 քկմ | 1981 |

Նախատեսվող գործունեության ենթակա և հարակից տարածքում բացակայում են հատուկ պահպանվող տարածքները:

**5.2.9. Սոցիալ-տնտեսական**

Երևան քաղաքը գտնվում է Հայաստանի Հանրապետության արևմուտքում, Արարատյան դաշտի հյուսիս-արևելյան մասում, համարում է երկրի խոշորագույն վարչաքաղաքական ու տնտեսական կենտրոնը: Սահմանակից է ՀՀ Արագածոտնի, Կոտայքի, Արարատի և Արմավիրի մարզերին: Երևանը պատմական Հայաստանի 12-րդ մայրաքաղաքն է և խոշորագույնն է ոչ միայն ՀՀ ներկա 49 քաղաքների, այլև նախկին մայրաքաղաքների շարքում: Էրեբունի անվամբ բերդաքաղաքը հիմնադրել է Վանի թագավորության արքա Արգիշտի Ա-ն Ք.ա 8-րդ դարում՝ 782թ.-ին: Էրեբունին հիմնադրվել է Հռոմից 29 տարի առաջ, Բաբելոնի, Նինվեի ու Պերսեպոլիսի հասակակիցն է և ներկայում հանդիսանում է 21-րդ դարի ծաղկուն քաղաքներից մեկը: Մայրաքաղաքում են գործում ՀՀ-ում միջազգային (միջկառավարական, միջպետական) և այլ կազմակերպությունների ներկայացուցչությունների գրասենյակները:

Աղյուսակ 7

| | |
|---|---|
| Տարածքը<br>Territory | 223 քառ. կմ/<br>sq. km |
| ՀՀ տարածքում քաղաքի տարածքի տեսակարար կշիռը, %<br>Territory share of the city in the territory of the RA, % | 0.7 |
| Վարչական շրջաններ<br>District communities | 12 |
| Բնակչության թվաքանակը 2024թ. տարեսկզբի դրությամբ<br>Population number as of the beginning of the year, 2024 | 1 106.3 հազ. մարդ/<br>ths. Person |
| ՀՀ բնակչության ընդհանուր թվաքանակում Երևան քաղաքի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը 2023 թ.,%<br>Share of city population in the total population of the RA 2023, % | 37.0 |
| Գյուղատնտեսական նշանակության հողեր<br>Agricultural land | 3 318.1հա/<br>ha |
| այդ թվում՝ վարելահողեր<br>including - arable land | 907.6 հա/<br>ha |

Համաձայն ՀՀ Վիճակագրական կոմիտեի 2025թ. տեղեկագրի՝ Երևան քաղաքում 2024թ. հունվարի 1-ի դրությամբ բնակչության թվաքանակը կազմում է 1106,3 մարդ, Էրեբունի վարչական շրջանում՝ 126.7 հազ. մարդ: Էրեբունի վարչական շրջանի տարածքը կազմում է 4850 հա:

Երևանը գտնվում է Արարատյան դաշտավայրի հյուսիս-արևելյան մասում: Սահմանակից է ՀՀ Արագածոտնի,Կոտայքի,Արարատի և Արմավիրի մարզերին:

Երևանը Հայաստանի Հանրապետության մայրաքաղաքն է: Այն խոշորագույնն է ոչ միայն ՀՀ ներկա 49 քաղաքների, այլև պատմական Հայաստանի մայրաքաղաքների շարքում:

«Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» օրենքով: Երևան քաղաքը բաժանված է 12 վարչական շրջանների՝ Աջափնյակ, Ավան, Արաբկիր, Դավթաշեն, Էրեբունի, Կենտրոն, Մալաթիա-Սեբաստիա, Նոր Նորք, Նորք-Մարաշ, Նուբարաշեն, Շենգավիթ, Քանաքեռ-Զեյթուն: Երևանի արդյունաբերության հիմնական ուղղությունները սննդամթերքի, ծխախոտի, խմիչքի տարբեր տեսակների և հիմնային մետաղների արտադրություններն են: Երևան քաղաքի սոցիալ-տնտեսական ցուցանիշները ներկայացված են ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական կայքին համապատասխան.

Երևանը հանրապետության ամենախոշոր տնտեսական կենտրոնն է: Բազմաճյուղ արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է: Համաձայն Վիճակագրական կոմիտեի կայք էջի՝ 2023թ. մայրաքաղաքի տնտեսության հիմնական հատվածների տեսակարար կշիռները Հայաստանի Հանրապետության համապատասխան ոլորտների ընդհանուր ծավալում կազմել են.

- ➢ արդյունաբերություն՝ 40.9 %
- ➢ շինարարություն՝ 49.2 %
- ➢ մանրածախ առևտուր՝ 72.7 %
- ➢ ծառայություններ՝ 86.2 %

Երևանի արդյունաբերության հիմնական ոլորտներն են սննդամթերքի, ծախսային արտադրատեսակների, խմիչքների, ինչպես նաև հիմնային մետաղների արտադրությունը: Գյուղատնտեսությունը հիմնականում մասնագիտացած է անասնաբուծությունում և բուսաբուծությունում: Երևանի արդյունաբերության հիմնական ճյուղերն են սննդամթերքի,

ներառյալ խմիչքների արտադրությունը, քիմիական և մետաղագործական արդյունաբերությունը:

Բեռնաուղևորափոխադրումներն իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով և երկաթուղով: Քաղաքում գործում է երկաթուղային կայարան և օդանավակայան որոնք ապահովում են կապն արտաքին աշխարհի հետ:

Քաղաքում գտնվում են  բազմաթիվ դպրոցներ, գրադարաններ, պատկերասրահներ, թատրոններ, կինոթատրոններ, թանգարաններ, Օպերայի և բալետի թատրոնը և այլ մշակութային օջախներ, մետրոպոլիտենը: 2023թ. դրությամբ Երևան քաղաքում առկա են քաղաքապետարանի ենթակայության տակ գտնվող 152 դպրոցներ/հիմնական, նախակրթարան/, 5 հատ թանգարան, 3 հատ թատրոն, 19- գիրադարան, 26- երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցներ և այլն: Առկա են  19 պետական բարձրագույն ուսումնական հաստատություններ, 31 առողջապահական կազմակերպություններ, որից 23-ը քաղաքապետարանի ենթակայության և այլն:

Համաձայն Երևան քաղաքի 2024-2028թթ. զարգացման ծրագրի՝ Երևանում առաջնահերթություն ունեն ծառայությունների զարգացման ոլորտը՝ հանրային սննդի կազմակերպումը, մշակույթը, հանգիստը, կրթությունը և այլն: Ամենափոքր բաժինը կազմումէ գյուղատնտեսությունը, որը հիմնականում մասնագիտացված է անասնապահության և բուսաբուծության մեջ: Զարգացման հեռանկարում նախատեսվում է ենթակառուցվածքների զարգացում, դպրոցների, նախակրթարանների, ջրամատակարարաման, ջրահեռացման համակարգերի բարելավում, հիմնանորոգում, փողոցների, այգիների կահավորում,  բարեկարգում,  հին լուստուների փոխարինում նոր էներգաարդյունավետ ԼԵԴ լամպերով, կոշտ թափոնների համար եվրոպական չափորոշիչներին համապատասխան քաղաքային նոր աղբավայրի կառուցում:

Երևան քաղաքում հաշվառված է մթնոլորտային օդի վրա վնասակար ազդեցություն առաջացնող շուրջ արտադրություններ: Երևան քաղաքի բոլոր վարչական շրջաններում հողերը բնութագրվում են աղտոտման գումարային գործակցի (ԱԳԳ) բարձր մակարդակով: Երևան քաղաքի մթնոլորտային օդի և հողերի որակի վատթարացման հիմնական պատճառներից են քաղաքում շարունակաբար ավելացող տրանսպորտային միջոցները, հրդեհները, կենցաղային և արդյունաբերական աղտոտումը, հողօտարումները, հողի էռոզիան, կանաչ տարածքների կրճատումը և այլն: Այդ նպատակով կարևոր է Երևան քաղաքում բուֆերային գոտիների պահպանումը, վերականգնումը և կանաչապատ տարածքների բարելավումը, ավելացումը, ոռոգման ցանցի ընդլայնումը և բարեկարգումը:

Համաձայն զարգացման ծրագրի՝ Երևան քաղաքի կանաչ զանգվածը կազմում է 6760 հա, որից ընդհանուր օգտագործման կանաչ մակերեսը կազմում է 872.8 հա: Մեկ բնակչին բաժին ընկնող կանաչապատ տարածքը կազմում է 8քմ:  Քաղաքի ոչ բարենպաստ էկոլոգիական վիճակը պահանջում է կանաչապատման որոշակի ռազմավարության մշակում, պաշտպանիչ կանաչ բուֆերային գոտիների ստեղծման և ընդլայնման անհրաժեշտություն, հասցնելով մեկ բնակչին բաժին ընկնող կանաչապատ տարածքը  9քմ: Նախատեսվում է կլիմայի փոփոխության ազդեցության մեղման, էներգարդյունավետության, վերականգնվող էներգիայի կիրառմանն առնչվող միջոցառումներ՝ $CO_2$-ի արտանետումները օդային ավազան կրճատելու նպատակով:

### 6. Նախատեսվող գործունեության բնութագիր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումները, օգտագործվող բնական ռեսուրսներ և նյութեր, (շինարարության շահագործման, փակման փուլեր).

Երևանի Էրեբունի վարչական շրջանի Արին-Բերդ փողոցի 25 հասցեում կառուցվող պահեստային շինությունը կառուցվելու է Երևան համայնքի կողմից տրված նախագծման թույլտվության պահանջներին համապատասխան.

- ✓ Հարկայնությունը՝ 1 հարկ/6.0 և 9.0 նիշերում/անտրսոլային հարկերով:
- ✓ Առավելագույն բարձրությունը՝ 23.0մ ՝ տարածքի ստորին հատակագծային նիշից:
- ✓ Կառուցապատման և կանաչապատման տոկոսայնությունն՝ ըստ նախագծային լուծումների:
- ✓ Տանիքը նախատեսել լանջավոր, ջրահեռացումը կազմակերպված և այլն:

Նախագծային լուծումներում պահպանվել են կառուցապատման վերաբերյալ վերը նշված պահանջները:

Տարածքը գտնվում է կառուցապատված թաղամասում:

**Քանդման աշխատանքներ.** նախատեսվող գործունեության տարածքում առկա է պարիսպ,արտադրական շինություններ, որոնք չեն քանդվելու, այլ վերանորոգվելու են: Քանի որ քանդման աշխատանքներ չեն կատարվելու, ուստի թափոններ շինաղբի տեսքով չեն առաջանալու:

**6.1.Շինարարության փուլ.**

**Շին.հրապարակ. պահեստի** շինարարական աշխատանքների իրականացման համար նախատեսվող շինարարական հրապարակն ամբողջ տարածքն է, որը կազմում է 1550մ$^2$ մակերես, մոտ՝ 1200մ$^2$ ջրցանվող մակերեսով:

Շինարարության փուլում նախատեսվում է հետևյալ շինարարական աշխատանքները.

- շինարարական հրապարակի կազմակերպում,
- հողային աշխատանքներ,
- հիմնային աշխատանքներ,
- ծածկեր, կոնստրուկցիաներ,
- տիպային հարկերի պատեր, տանիքային աշխատանքներ, միջնորմներ,
- սանտեխնիկա, էլեկտրամոնտաժում,
- հարդարման, բարեկարգման աշխատանքների իրականացում և այլն:

Շինարարական հրապարակում լինելու են.

- գրասենյակ, բուժկետ
- հանդերձարան
- ցնցուղարան
- սննդի ընդունման սենյակ
- փակ և բաց պահեստ
- բիոզուգարան 2 հատ
- աղբի տարաներ 2 հատ
- լուսարձակներ 6 հատ
- հակահրդեհային վահանակ՝ 1 հատ, հակահրդեհային հիդրատներ 2 հատ
- ավտոմեքենաների կայանման տարածք

- մեքենաների անիվների լվացման տարածք, հարթակ՝ 3.0x8,5 մ չափերի:

Շինհրապարակն ապահովված է լինելու գիշերային լուսավորությամբ՝ 2 լույսից ոչ պակաս:

Շինհրապարակում նախատեսված է շինարարական աղբի պահման տարածքը:

Շինհրապարակի կազմակերպման հատակագիծը

Գծապակեր 3



Շինարարության ժամանակ աշխատողների համար նախատեսվող ճաշարանը, հանդերձարանը, գրասենյակը, պահակատունը տեղադրվելու են տարածքում՝ ժամանակավոր վագոն տնակներում:

Շինհրապարակի տարածքում կատարվելու է մեքենաների անիվների լվացում, որի համար նախատեսված է անիվների լվացման տարածք 1 հարթակ՝ 3,0x8,5մ չափերի: Անիվների լվացում պահանջող մեքենաները պետք է անցնեն անիվների լվացման սարքի միջով՝ շինհրապարակից դուրս գալուց առաջ: Շինհրապարակում անիվների լվացումից առաջացած հոսքաջրերը հեռացվելու են շինհրապարակում տեղադրված բիոզուգարաններ: Շինարարական և անձրևաջրերից առաջացող հոսքաջրերը պլաստմասե վերգետնյա խողովակներով հեռացվելու են դեպի տարածքում տեղադրվող համապատասխան տարողության պարզարան: Պարզարանում տեղի է ունենում մեխանիկական նստեցում: Պարզեցված ջուրը կօգտագործվի շինարարական աշխատանքների ժամանակ շինարարական հրապարակի ջրցանման և անիվների լվացման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինաղբ: Տեղադրվելու է 10տ տարողության ջրի բաք՝ տեխնիկական ջրի համար, որը կօգտագործվի ջրցանի և հրդեհամարման նպատակով:

Շինհրապարակի լրացուցիչ ցանկապատում չի նախատեսվում, վերանորոգվելու է հին ցանկապատը:

Պարսպի արտաքին մասում տեղադրվելու է տեղեկատվական պաստառ՝ համաձայն Երևանի ավագանու 16.03.2012թ. N 405-Ն որոշման:

Շինհրապարակն ապահոված է լինելու գիշերային լուսավորությամբ, էլեկտրականությամբ, պահպանվելու են անվտանգության և հակահրդեհային պայմանները:

Բոլոր տիպի շին-մոնտաժային աշխատանքները կկատարվեն պահպանելով շինարարական նորմերը, կանոնները, ստանդարտները և նախագծի տեխնիկական պայմանները:

Ելնելով առկա պայմաններից շինարարության փուլում նախատեսվում են անվտանգության նորմերի անհատական մոտեցումներ, հատկապես կապված կռունկի գործողության գոտում կատարվելիք շին. մոնտաժային աշխատանքների հետ:

**Հողային աշխատանքներ**. կառուցապատման ժամանակ կատարվելու են հողային աշխատանքներ՝ հանույթ՝ 350մ$^3$, որն իրականացվելու է մեխանիզմով և ձեռքի գործիքներով: Կատարվելու է գրունտների հետ լիցք՝ 150 մ$^3$ ծավալով: Մնացած՝ 200մ$^3$ ծավալի հողային զանգվածը կուտակվելու է տարածքում և տեղափոխվելու է աղբավայր՝ համաձայն Երևանի քաղաքապետարանի կողմից տրված շինթույլտվության պահանջներին:

Հողային և հիմնային, տանիքի, հատակների հարդարման, ինչպես նաև լրող և պատող կոնստրուկցիաների շին մոնտաժային աշխատանքները կատարվելու են համաձայն աշխատանքային նախագծի՝ ՇՆուԿ 3.02.02.-87-ի և ՇՆուԿIII-4-81-ի պահանջներին համապատասխան:

**Տեխնիկա-տրանսպորտային միջոցներ, սարքավորումներ, շինարարական աշխատանքներ.** գործունեության կատարման շինարարության փուլում օգտագործվող հիմնական տեխնիկա-տրանսպորտային միջոցներն են.

- Վերամբարձ կռունկ
- Ավտոմոբիլային ամբարձիչ
- Ինքնաթափ ավտոմոբիլ
- Բետոնամղիչ ավտոմոբիլ
- Շարժական կոմպրեսոր

- Եռակցման սարքեր
- Էքսկավատոր
- բետոնախառնիչ
- Ձեռքի էլեկտրական, եխանիկական գործիքներ և այլն:

Շինարարական աշխատանքների՝ բեռնման-բեռնաթափման ժամանակ օգտագործվող բեռնաբարձիչ մեքենաները, բեռնաբռնիչ սարքերը պետք է համապատասխանեն պետական ստանդարտներին կամ տեխնիկական պայմաններին՝ համաձայն ՇՆ և Կ III-4-80* պահանջներին: Բեռնման և բեռնաթափման համար նախատեսված տարածքը պետք է հարթեցվի և ունենա 50 -ից ոչ ավել թեքություն:

Շինտեխնիկան լինելու է Կապալառու ընկերության սեփական տեխնիկան կամ անհրաժեշտության դեպքում վարձակալվելու են այլ կազմակերպություններից: Մեքենաներն աշխատելու են ըստ հերթականության և ըստ անհրաժեշտության: Աշխատող մեքենաները կայանվելու են գործունեության տարածքում՝ շինարարական հրապարակում: Շինարարական տեխնիկայի և սարքավորումների կայանման վայրերում նախատեսվում է ավազի կամ մանրախճի փռու կամ բետոնասալերի տեղադրում՝ վառելիքի կամ քսայուղերի հնարավոր արտահոսքը հողային և ջրային ռեսուրսներ կանխելու նպատակով: Աղտոտված ավազը կամ մանրախիճը տեղափոխվելու է համապատասխան աղբավայր և փոխարինվելու է նորով:

Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումն իրականացվելու է շինհրապարակից դուրս՝ մասնագիտացված լցակայաններում կամ սպասարկման կետերում:

Կառուցապատման բոլոր լուծումների համար հաշվի են առնվելու տեղանքի պայմանները, կազմակերպվելու է անվտանգության տեխնիկայի կանոնների իրականացման համալիր միջոցառումներ՝ ղեկավարվելով ՀՀՇՆ III-IV.2008-ի դրույթներով:

Ամբողջ շինարարության ընթացքում վերահսկվելու են շինարարության որակի չափանիշները՝ տեխնիկական վերահսկողություն իրականացնող մարմնի կողմից: Ակտավորվելու են թաքնված աշխատանքները, գրանցելով վարման մատյանում:

Ելնելով առկա պայմաններից շինությունները բացի շինարարական նորմերով տրված անվտանգության հրահանգներից, անհրաժեշտ է կազմակերպել և աշխատանքների կատարման նախագծում արտացոլել անվտանգության նորմերի անհատական մոտեցումներ՝ հատկապես կապված կռունկի գործողության գոտում կատարվելիք շին. մոնտաժային աշխատանքների հետ:

**Էլեկտրամատակարարում.** էլեկտրամատակարարումը կկատարվի համաձայն՝ «ՀԷՑ» ՓԲԸ կողմից տրված տեխնիկական պայմանի: Նախատեսվում է միացում եռաֆազ 600ԿՎԱ հզորությամբ 10կՎ լարման տրանսֆորմատորային կայանից, որն իրականացվելու է ՏԵ13333-ի 10կՎ բ/ս–ից. Հավելված 6:

**Հրդեհաշիջման համակարգ**. շին. հրապարակը կազմակերպելիս ղեկավարվելու են «Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմին»-ի կողմից տրված հրահանգներով:

Շինարարական հրապարակում տեղադրվելու է 1 հրդեհաշիջման վահանակ՝ դարպասների մոտ, յուրաքանչյուրի վրա հակահրդեհային հիդրատներով: Շինարարության փուլում տեղադրվելու է նաև 10մ³ ծավալի տարողության ջրի բաք՝ հրդեհամարման, ջրցանի նպատակով:

**Աղբահեռացում.** Շինարարության փուլում առաջանալու են թափոններ՝ շինարարական աղբի տեսքով՝ նյութերի մնացորդներ (ավազ, մանրախիճ, աղտոտված լաթեր, պարկեր), կենցաղային աղբ, մետաղական մնացորդներ(մետաղյա լարերի մնացորդներ):

Կենցաղային աղբը կառուցապատման փուլում կազմելու է 4800կգ/տարի:

Կենցաղային աղբի կուտակման համար տեղադրվելու են 1.5*1 չափերի 2 աղբարկղ:
Շինարարության փուլում աղբահեռացումը՝ թափոնների տեղափոխման վայրը, շինհրապարակում աղբի և հողային զանգվածի կուտակման վայրը՝ կճշտվի շինթույլտվության փաստաթղթում:

## 6.2 Ժամանակացույց

Շինարարական աշխատանքների ընդհանուր տևողությունը կազմելու է 36 ամիս՝ 3 տարի:
Շինարարության նորմատիվ տևողությունը որոշվել է համաձայն (N 596-Ն 19.03.2015թ. ՀՀ Կառավարության որոշում կետ 111, 113) ՍՆԻՊ 1.04.03-85* մաս II հիման վրա, հաշվի առնելով օբյեկտի նշանակությունը, կոնստրուկտիվ բնութագիրը, ընդհանուր մակերեսը:

# ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ




## ԸՆԴՀԱՆՈՒՐ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 36 ԱՄԻՍ

| | | | |
|---|---|---|---|
| ՆԳԾ | Ա. ՂՈՒԼԻՋԱՆՅԱՆ | Կառուցում, Պահեստային շինության / անգար / կառուցում | |
| ՃԱՐՏԱՐԱՊԵՏ | Լ. ԳԱԼՍՏՅԱՆ | ՀԱՍՑԵ ՝ Ք.ԵՐԵՎԱՆ,Էրեբունի վ.2. Արին Բերդի փողոց 25 | ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝ «Ա ԿԼԱՍ ԼՈԳԻՍՏԻԿԱ» ՍՊԸ |
| | | ՃԱՐՏ. ՇԻՆ. ՄԱՍ. | ՓՈՒԼ. Ա. Ն. / ԹԵՐԹ. ՇԿ-6 / ԹԵՐԹԵՐ. 27 |
| « ԳԼՈԲԱԼ ՊՐՈԵԿՏ » ՍՊԸ ՏՆՕՐԵՆ ՝ Լ. ՉԱՏԻԿՅԱՆ | | ՇԻՆ. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ 1 : 20 | ԱՐՏՈՆԱԳԻՐ ՃԲԴ - Ա-0273<br>ԼԻՑԵՆԶԻԱ N ՔՊԼ 17324 |

**Բարեկարգում և կանաչապատում.** գործունեության կառուցապատման աշխատաքների ավարտից հետո նախատեսվում է շենքի հարակից տարածքում բարեկարգում և կանաչապատում: Կանաչապատումը կատարվելու է թփերի տեղադրման և խոտածածկի միջոցով:

### 6.3. Օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր

Շինարարության փուլում բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր, իսկ շահագործման փուլում ջուր՝ խմելու-կենցաղային նպատակով:

**Ջուր.** շինարարության փուլում ջուրն օգտագործվելու է աշխատողների խմելու, տնտեսա-կենցաղային կարիքների, տարածքի ջրցանի, հողի(գրունտի) խոնավացման և անհրաժեշտության դեպքում հրդեհաշիջման համար:

Շինարարության փուլում աշխատողների համար խմելու ջուրը բերվելու է պատրաստի վիճակում՝ շշերով, ըստ պահանջի:

Ջրցանի համար նախատեսվող տեխնիկական ջուրը բերվելու է ավտոցիստեռնով՝ պայմանագրային հիմունքներով, համապատասխան լիցենզիա ունեցող անձանց կամ ընկերությունների կողմից: Ջուրը լցվելու է տարածքում տեղադրվող 10 տ տարողության բաքի մեջ: Ջրի մատակարարման հաճախականությունը կատարվելու է ըստ կարիքի: Տեխնիկական ջուրն ըստ անհրաժեշտության օգտագործվելու է հրդեհամարման, ջրցանի և անիվների լվացման համար:

ա) Շինանձնակազմի կենցաղային և տնտեսական ջրածախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$W Ë.ï. = (n \times N + n1 \times N1) \times T,$$ որտեղ

n – ԻՏ աշխատողների, ծառայողների թվաքանակն է՝ 5 մարդ

N– ԻՏԱ ջրածախսի նորմատիվն է՝ 0.016 $մ^3$օր/մարդ

n1– սպասարկող աշխատողների թվաքանակն է՝ 35 մարդ

N1 – սպասարկողների ջրածախսի նորմատիվն է ՝ 0.025 $մ^3$օր/մարդ

T – աշխատանքային օրերի թիվն է՝ 930օր:

$$Wխ.տ.= (5 \times 0.016 + 35 \times 0.025) \times 930 = 888.15 մ^3/շին.\ ժամ.\ կամ\ 0.955\ մ^3/օր:$$

բ) Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը որոշվում է հետևյալ կերպ՝

$$Մ1 = S1 \times K1 \times T,$$ որտեղ՝

S1 – ջրվող տարածքի մակերեսը 1200 $մ^2$, (շինհրապարակ, ճանապարհներ)

K1 – 1 $մ^2$ օրական ջրցանի նորմը, 0.0015 $մ^3$,

T – ջրցանի ժամանակահատվածը օրերով՝ 2061 (ներառված եռակի ջրցանը)

Մ1 = 1200 x 0.0015 x 2061=3709.8$մ^3$/շին. ժամ. կամ 1.8 $մ^3$/օր:

Ընդամենը ջրի սպառումը շինարարության փուլում կլինի 4597.95$մ^3$/շին. ժամ կամ 2,755 $մ^3$/օր:

**Անիվների լվացման համար** Շինարարության փուլում նախատեսվում է օրը 2-3 հատ մեքենաների լվացումը ՝ յուրաքանչյուրը 1 անգամ հաճախականությամբ:

Տեղադրվելու են 1 հատ լվացման կետ, յուրաքանչյուրի ջրաքանակի նորման ընդունված է 0,8լ/վրկ:

$$Q_2 = 0.8 \times 3 = 2.4 լ/վրկ$$

**Կեղտաջրեր**. Կեղտաջրերի ազդեցությունը շրջակա միջավայրի վրա մեղմելու նպատակով նախատեսվում է.

- շինարարության փուլում աշխատողներն օգտվելու են ժամանակավոր տեղադրվող սանիհանգույցներից՝ 2 հատ բիոզուգարաններից՝ 1,5*2*2 մ չափերի,
- բիոզուգարանների մաքրումը կատարվելու է մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով,
- շինաշխատանքների ավարտից դրանք ապամոնտաժվելու են:

**Շահագործման փուլում** իրդեհաշիջման համար պահանջվող ջրի ելքը հաշվարկվել է համաձայն «Շենքերի ներքին ջրամատակարարում և ջրահեռացում» ՀՀՇՆ.40-01.01-2014 նորմերի:

**Նյութեր**. Շինարարության ժամանակ օգտագործվելու են շինանյութեր, մասնավորապես.
Շինարարության ժամանակ օգտագործվելու են շինանյութեր, մասնավորապես.

- երկաթբետոն,
- մետաղ, մետաղական կարկասներ
- ապակի,
- բազալտ
- սենդվիչ պանելներ
- բարձրորակ երեսապատման սալիկներ
- բետոն և այլ շինարարական նյութեր:

Կառույցի երեսապատումը նախատեսվում է իրականացնել բազալտե քարե սրբատաշ սալիկներով, այն համադրելով սենդվիչ պանելներով:

Շինհրապարակում բետոնի շաղախի պատրաստման հանգույցի տեղադրում և բետոնախնուրդի պատրաստում չի նախատեսվում: Բետոնի շաղախը մատակարարվելու է մասնագիտացված ընկերության կողմից՝ համապատասխան բետոնախառնիչ մեքենաներով: Միաձույլ ե/բ կոնստրուկցիաների բետոնալցման համար համապատասխան դասի բետոնը պատվիրվելու է մասնագիտացված բետոնային հանգույցներում: Բետոնը շինհրապարակում լցվելու է կաղապարների մեջ բետոնամղիչով:

Շինաշխատանքերը կատարվելու են մասնագիտացված կապալառու կազմակերպությունների կողմից: Շինարարության համար նախատեսված բոլոր նյութերն, ինչպես նաև շենքի արտաքին և ներքին հարդարման նյութերը մատակարարվելու են համապատասխան մասնագիտացված (լիցենզավորված) կազմակերպություններից՝ շինինդուստրիայի ձեռնարկություններից և գլխավոր շինարարական կազմակերպության արտադրական բազայից:

Ձմռանը ներքին հարդարման և բետոնային աշխատանքները կատարվելու են հատուկ տաքացման պայմաններում: Շինհրապարակում շինանյութերը պահեստավորվելու են պահեստներում, իսկ բաց տարածքի դեպքում կտեղադրվեն տակդիրների վրա՝ չգերազանցելով նախատեսված բարձրության նորմերը: Սորուն նյութերը պահեստավորվելու են ծածկի տակ:

**6.4 Շահագործման փուլ**. Նախատեսվող գործունեության հողատարածքը գտնվում է Էրեբունի վարչական շրջանում ՝ Արին-Բերդի 25 հասցեում:

**Շինության տեխնիկա-տեխնոլոգիական ցուցանիշները և լուծումները:**

- Հողամասի մակերեսը կազմում է 2.7151հա կամ 27151մ$^2$ (100%)
- Նոր կառուցապատվող շենքի մակերեսը՝ 8364Ն$^2$(30%)
- Անջրանցիկ մակերեսը 14470մ$^2$(53.3%),
- Կանաչ գոտիների մակերեսը՝ 12681մ$^2$(46.7%)

- Կառուցապատման մակերես ըստ հարկերի՝ 8995մ²
- Հարկայնությունը՝ վերգետնյա 1+2՝ անտրսոլային
- Առավելագույն բարձրությունը՝ 23.0մ



Շենքն ունենալու է  ուղղանկյունաձև հատակագծային լուծում, մետաղական և երկաթբետոնե կոնստրուկտիվ լուծումներով: Պահեստը նախատեսված է իրականացնել  վերրգետնյա 1 +3 հարկերով, որտեղ 2-րդ և 3-րդ անտրեսոլային հարկը իրականացված է մասնակի: 1-ին հարկի բարձրությունը կազմում է 12մ, որտեղ առկա է միջհարկային ծածկը: Շինության մի հատվածում գոյանում է 2-րդ և 3-րդ  հարկերը: Իրականացված շենքի բոլոր տարհանման ելքերում նախատեսված են հակահրդեհային դռներ: Շենքի՝ որմնախարսխի բարձրությունը կազմում է՝ 1.2 մ, 1-ին հարկի հատակի նիշը գտնվում է 0.0 նիշում: 2-րդ հարկի հատակի նիշը գտնվում է +6.0 նիշում, իսկ շենքի ամենաբարձր կետը գտնվում է 17.00 նիշում:

Շինության տանիքը  լանջավոր է, ջրահեռացումը՝ արտաքին,  կազմակերպված:

Շենքը կառուցվելու է կարկասային՝ մետաղյա, մոնոլիտ և հավաքովի կոնստրուկցիաներով: Որմնախարիսխը նախատեսված է երեսապատել բազալտե սալիկներով, իսկ ճակատային հատվածները՝սենդվիչ պանելներով:

Նախագծային լուծումներում հաշվի է առնված տարածքի երկրաչափական ուրվագիծը, ռելիեֆային առանձնահատկությունները, հարակից տարածքների կառուցապատումը:

Տարածքում նախատեսվում է  թաքստոց՝ 75մ² մակերեսով, որը լիովին ապահովում է աշխատողների թվաքանակը և այն հագեցած է լինելու ապաստարանի համար ներակայացված պայմաններով:

Մուտքի մոտ նախատեսվում է պահակակետ, զննման կետ,  շարժական աշխատատեղեր:

**Ավտոկայանատեղիներ**. Ավտոկայանատեղի չի նախատեսվում, մեքենաները մտնելու են բեռնվեն/բեռնաթափվեն և դուրս գան:

Շենքի մուտքը լինելու է Արին-Բերդ փողոցից:

Շենքի հակահրդեհային պաշտպանությունը կազմակերպվելու է համաձայն՝ ՀՀՇՆII-8.04.-2005 «Շենքերի և շինությունների հրդեհային ավտոմատիկա» շինարարական նորմերի, «Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի» կողմից տրված հրահանգների, ինչպես նաև փոշեհատիկային հրդեհաշիջման մոդուլների տեխնիկական անձնագրերի հիման վրա:

Պահեստային տարածքներում ջեռուցում չի նախատեսվում, պահակակետում և սպասարկման տարածքներում ջեռուցումն իրականացվելու է էլեկտրական օդորակիչներով:

Նախագծային լուծումներում հաշվի է առնված նաև  ՀՀ կառավարության 12. 04.2018թ «Նոր կառուցվող բնակելի բազմաբնակարան շենքերում, ինչպես նաև պետական միջոցների

հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության և էներգաարդյունավետության տեխնիկական կանոնակարգը սահմանելու մասին» N426-Ն որոշմամբ սահմանված պահանջները՝ էներգախնայողության և էներգաարդյունավետության ապահովմանն ուղղված միջոցառումներին համապատասխան: Ինժեներատեխնիկական համակարգերի համար նախատեսված էներգաարդյունավետության նվազագույն պահանջները վերաբերում են՝

1) ջեռուցման համակարգերին.

2) տաք ջրամատակարարման համակարգերին.

3) օդի լավորակման համակարգերին.

4) ընդհանուր օդափոխման համակարգերին կամ դրանց համակցությանը.

5) լուսավորության համակարգերին:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատումն իրականացվելու է թփերով և գազոնով:

Շահագործման փուլում շենքն ապահովված են լինելու ծայնամեկուսացման, ջերմամեկուսացման, օդափոխության և ավտոմատ հրդեհային ազդարարման համակարգերով՝ ծխի և ջերմային ազդանշանային ընդունող-հսկիչ սարքերով, լուսածայնային-ազդանշանային ազդասարքերով:

Շենքն ապահովված են լինելու վերելակով, ինչպես նաև էվակուացիոն ելքերով:

**Օդափոխություն**. Արտածման և ներածման համակարգեր. շենքի օդափոխությունը կատարվելու է բնական օդատարներով, որոնք հորանների միջով բարձրանում են դեպի տանիք:Ծխահեռացման օդամուղները տեղակայված են տանիքի վրա: Շենքում նախատեսված են ներածման և ծխի արտածման համակարգեր, որոնց օդամուղերը տեղակայվում են տանիքի վրա:

**Հակահրդեհային համակարգ.** շենքն ապահովված է լինելու հրդահամարման համակարգերով: Տեղադրվելու են կրակմարիչներ:

Ջրամատակարարում, ջրահեռացում- ջրամատակարարման համակարգը միանալու է քաղաքային համակարգին համաձայն՝ «Վեոլա ջուր»ՓԲԸ-ի կողմից տեխնիկական պայմանի պահանջներին համապատասխան: Հավելված 5.

Տարածքում առկա է կոյուղատար, նախագծով նախատեսվում է շինության ջրահեռացման համակարգը միացնել գոյություն ունեցող կոյուղատարին:

**Հեղեղատար համակարգ.** հարթ տանիքներից անձրևի և հալոցքի ջրերը ներքին ջրհոսի ցանցով հեռանում են բակային ցանց:

Ավտոկայանատեղիի լվացման, հալոցքի և հրդեհամարումից հավաքված ջրերը հեռանելու համար նախատեսված են հոսակներ:

**Աղբահեռացում.** Շահագործման փուլում աղբահեռացումը կատարվելու է Երևան քաղաքի ավագանու 23 դեկտեմբերի 2011թ. «Աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի գանձման կարգը հաստատելու մասին» 360-Ն որոշմամբ սահմանված կարգով: Տեղադրվելու են 3 հատ 1*1,5 չափերի աղբամաններ: Կտեղադրվեն նաև տեսակավորման աղբամաններ:

**Կանաչապատում.** շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է կառուցապատումից ազատ տարածքի բարեկարգում և կանաչապատում՝ 12681մ$^2$ մակերեսով:

### 7. Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները, ռիսկերը (շինարարության և շահագործման փուլ)

ՇՄԱԳ հաշվետվության շրջանակներում կատարվել է գործունեությաննն առնչվող գոյություն ունեցող բնապահպանական և սոցիալական ելակետային պայմանների

ուսումնասիրություն: ՇՄԱԳ-ի հիմնական նպատակն է՝ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում հնարավոր բնապահպանական և սոցիալական վնասակար ազդեցությունների կանխատեսումը և դրանց կանխարգելմանը, նվազեցմանը կամ բացառմանն ուղղված ազգային և միջազգային ստանդարտներին համապատասխան մեղման ուղղված միջոցառումների մշակումը, դրանց արդյունավետ իրականացման մեխանիզմները: Մշակվել են այդ ազդեցությունները կանխարգելող կամ մեղմող միջոցառումներ, ինչպես նաև այդ միջոցառումների արդյունավետության վերահսկման և մոնիթորինգի ծրագիր:

Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները և ռիսկերը հիմնականում կապված են՝

- օդային ավազանի ՝ պայմանավորված շինտեխնիկայի աշխատանքի արդյունքում օդային ավազան արտանետումների,
- ջրային ռեսուրսների օգտագործման,
- արտակարգ իրավիճակների առաջացման,
- թափոնների կառավարման,
- շինարարության ընթացքում մարդու առողջության և աշխատանքի անվտանգության հետ:

Շրջակա միջավայրի գնահատումները կատարելու համար հիմք են հանդիսացել գործունեության իրականացման նախագիծը, առնչվող օրենսդրական դաշտը, համակարգչային տեղեկատվությունը, քարտեզագրական նյութերը, համայնքի և այլ կառույցների կողմից տրված տեղեկատվությունը, կարծիքները, առաջարկությունները:

Գործունեության իրականացման ենթակա տարածքը գտնվում է Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի Արին-Բերդի 25 հասցում: Նախատեսվող գործունեության իրականացման հետևանքով շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները կառաջանան շինարարության փուլում, կապված՝ հողային աշխատանքների, մեքենաների և շինտեխնիկայի շահագործումից առաջացող ծխագազերի արտանետումների, շինտեխնիկայի շահագործման և ավտոտրանսպորտի տեղաշարժի արդյունքում աղմուկի մակարդակի ավելացման, թափոնների կառավարման, բետոնային աշխատանքների հետ, որոնք կլինեն կարճաժամկետ:

Գործունեության իրականացումը կառաջացնի լանդշաֆտի որոշակի ծանրաբեռնվածություն, բայց այն տեսողական խոչընդոտ չի առաջացնի, քանի որ գործունեությունն իրականացվելու է խիտ կառուցապատված տարածքում:

Կառուցապատումը կատարվելու է ՀՀ գործող շինարարական նորմերին և պահանջներին համապատասխան:

## 7.1 Օդային ավազան.

**Շինարարության փուլ.** գործունեության իրականացման շինարարության փուլում լինելու են օդային ավազան արտանետումներ՝ տրանսպորտային միջոցների աշխատանքի ընթացքում՝ ծխագազերի և հողային աշխատանքների (փորման, հարթեցման), ճանապարհների օգտագործման ժամանակ առաջացող փոշու տեսքով:

**Իրականացնելով շինարարության ժամանակ աղտոտող նյութերի սահմանայինթույլատրելի արտանետման ծավալների հաշվարկները, ներկայացնենք Աղյուսակ 15-ի տեսքով դրանց ամբողջական վերլուծությունը և նկարագիրը**

**Աղյուսակ 8.**

| Շինարարական աշխատանքների փուլերը | Մթնոլորտ վնասակար արտանետումների քանակը, գ/վրկ | ժամանակահատված) | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Անօրգանական փոշի 70-20% SiO2 | Անօրգանական փոշի > 70 SiO2 | Ածխածնի օքսիդ | Ածխաջրածիններ (CH) | Ազոտի օքսիդներ | Ծծմբի երկօքսիդ | Մուր | իմեթիլբենզոլ | ախյալ մասնիկներ |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | | | 6 | | |
| Շինտեխնիկայի տեղաշարժ՝ այդ թվում նաև աղբի տեղափոխում | 0,0396 | - | - | - | - | - | - | | |
| Փորման աշխատանքներ | 0,003 | - | - | - | - | - | - | | |
| Բեռնման – բեռնաթափման՝ այդ թվում շենքի վերակառուցման աշխատանքներ | - | 0,000945 | - | - | - | - | - | | |
| Դիզելային շարժիչից առաջացող արտանետումներ | - | - | 0,00362 | 0,003214 | 0,00409 | 0,00204 | 0,00278 | | |
| Ամրակցման աշխատանքներից արտանետումներ | - | - | - | - | - | - | - | 001094 | 001512 |

Գործունեության իրականացման ընթացքում օդային ավազանի հնարավոր աղտոտվածությունը լինելու է կարճաժամկետ և թույլատրելի նորմերի սահմաններում՝ պայմանավորված գնահատման հաշվետվությունում նախատեսվող միջոցառումների պարտադիր կատարմամբ: Շինարարության ընթացքում փոշեառաջացման կանխարգելման և փոշենստեցման նպատակով «օդի դրական ջերմաստիճանի դեպքում շինարարական հրապարակը, բացառությամբ վերանորոգվող և վերակառուցվող փողոցների, օրվա ընթացքում պարբերաբար ջրել, բացառելով կեղտաջրերի թափանցումը շինարարական հրապարակի սահմաններից դուրս»:

**7.2 Հողային ռեսուրսներ.** գործունեության ենթակա տարածքի հողի նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական է, իսկ գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ արդյունաբերական օբյեկտների կառուցապատման: Տարածքում բացակայում է հողաբուսաշերտը, վերին շերտը տարբեր ապարների թույլ գնդավորված խճաքարա-խճավազային նստվածքներով մոտ 15-30% խառնավազա-կավավազային լցանյութով:

Համաձայն նախագծային լուծումների՝ կառուցապատման ժամանակ կատարվելու են հողային աշխատանքներ՝ 350մ$^3$ ծավալով հողի հանույթ, որն կատարվելու է մեխանիզմով և ձեռքի գործիքներով: Կատարվելու է գրունտների հետ լիցք՝ 200 մ$^3$ ծավալով: Մնացած՝ 150մ$^3$ ծավալի հողային զանգվածը կուտակվելու է տարածքում և տեղափոխվելու է աղբավայր՝ համաձայն Երևանի քաղաքապետարանի կողմից տրված շինթույլտվության պահանջներին:

Հողային ռեսուրսների վրա հնարավոր ազդեցությունները մեղմելու նպատակով հաշվետվությունում նախատեսվում են բնապահպանական միջոցառումներ:

**7.3 Ջրային ռեսուրսներ.** Համաձայն «Հայր և Որդի Տիտիզյաններ» ՍՊԸ կողմից տրված ինժեներաերկրաբանական եզրակացության՝ գործունեության տարածքում գրունտային ջրերի տեղամասերն ըստ հորատված հորատանցների, գտնվում են հիմնականում 15.0 մ-ից ցածր խորությունների միջակայքերում: Կառուցապատվող տարածքում չկան մակերևութային ջրային ավազաններ կամ առուներ: Ուստի մակերևութային և գրունտային ջրերի վրա ուղղակի ազդեցություն չի կանխատեսվում: Շինարարական աշխատանքները կատարվելու են ցանկապատված շինհրապարակի ներսում, ինչը կբացառի և/կամ կնվազեցնի հնարավոր արտահոսքերը և արտանետումները ջրային ռեսուրսներ:

**Կեղտաջրերի հեռացում.**

***Շինարարության փուլում*** աշխատողներն օգտվելու են տարածքում տեղադրվող սանհանգույցներից՝ բիոզուգարաններից: Տեղադրվելու են 1.5x2.2 մ չափերի չափերի 2 հատ բիոզուգարաններ: Բիոզուգարանների մաքրումը կկաըարվի մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

***Շահագործման փուլում շենքի*** ջրամատակարարման համակարգը միացվելու է քաղաքային ջրատարին: Իսկ ջրահեռացման համակարգը՝ տարածքում առկա ջրահեռացման ցանցին:

**7.4 Կենսաբազմազանություն.**

**Բուսական աշխարհ**. նախատեսվող գործունեության ենթակա տարածքն արդեն ենթարկված է անտրոպոգեն ազդեցությունների, չի օգտագործվել որևէ նպատակով, բայց կից գտնվող բնակելի և հասարակական շինությունների առկայության պատճառով տարածքը ենթարկվել է մարդու ազդեցությանը: Տարածքում ծառերը բացակայում են, տեղ-տեղ առկա է խոտածածկ՝ փշերի և խոտածածկի տեսքով: Ծառահատման աշխատանքներ չեն կատարվելու:

**Կենդանական աշխարհ.** գործունեության հարակից տարածքներն արդեն կառուցապատված են եղել, այժմ քանդված շինություններ են, ուստի մարդկային գործոնի, երթևեկության՝ մեքենաների շարժի, աղմուկի պայմաններում տարածքում բացակայում են կենդատեսակները, ինչպես նաև կենդանիների բնադրավայրերը, միգրացիոն ուղիները:

Հաշվի առնելով, որ նախատեսվող գործունեությունն իրականացվելու է Երևան քաղաքի բնակեցված և կառուցապատված թաղամասում, քաղաքային կենսաբազմազանության վրա ազդեցություններ չեն կանխատեսվում: Այնուամենայինիվ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների և կենդանիների բնադրավայրերի հայտնաբերման համար շինարարության սկզբում նախատեսված է մշտաիտարկումներ:

**7.5 Թափոններ.** գործունեության իրականացման հետևանքով շինարարության փուլում առաջանալու են կոշտ թափոններ.

- Կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած խոշոր եզրաչափերի աղբ( ծածկագիր՝ 91200500 01 00 5)՝ 120 մ$^3$:
- Կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբ (բացառությամբ խոշոր եզրաչափերի) (ծածկագիր՝ 91200400 01 00 4) կառուցապատման փուլում՝ 4800 կգ/տարի:
- Փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չաղտոտված հող» (ծածկագիրը՝ 31401100 08 99 5)՝ 200մ$^3$:
- Յուղոտված լաթեր(58200600 01 01 4)՝ 2կգ:
- Յուղերով աղտոտված ավազ(յուղի պարունակությունը - 15%-ից ցածր՝ 31402303 01 03 4)-4մ$^3$:

Այս կարգի թափոնները համաձայն՝ ՀՀ բնապահպանության նախարարի 2006թ. դեկտեմբերի 25-ի N430-Ն և 2006 թվականի հոկտեմբերի 26-ի N342-Ն հրամանների՝ ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկի՝ պատկանում են 4 և 5-րդ դասերին: Գործունեության իրականացման ընթացքում Կապալառուի կողմից կկատարվի թափոնների քանակական գնահատում, ելնելով փաստացի քանակներից: Թափոնների փաստացի քանակների հաշվառումը կատարվում է համաձայն ՀՀ կառավարության 14.09.2006թ. N1343-Ն որոշ մանապահանջներից ելնելով՝ առաջացող թափոնների փաստացի ծավալների հիման վրա:

**Կենցաղային աղբի հաշվարկները**

Կենցաղային աղբի ծավալը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$M=n*m$$

m – 1 հերթափոխում կենցաղային աղբի ծավալն է մեկ մարդու հաշվով՝ 120կգ/տ
n – աշխատողների թիվն է/40 մարդ/

$$M=40*120= 4800 \text{ կգ/տարի}$$

Շինարարությունը տևելու է 3 տարի, հետևաբար

M=4800*3= 16200 կգ/տարի կամ 17,4 կգ/օր (930 աշխատանքային օր)

Շահագործման փուլում կենցաղային աղբի առավելագույն ծավալը հաշվարկվել է հաշվի առնելով աշխատողների առավելագույն ծանրաբեռնվածությունը՝ 20 մարդ: Շահագործման փուլում կենցաղային աղբի ծավալը կկազմ

M=20*360= 7200կգ/տարի կամ 19.7կգ/օր

Հաշվետվությունում նախատեսված են միջոցառումներ՝ թափոնների ազդեցությունը շրջակա միջավայրի վրա մեղմելու կամ կանխարգելելու նպատակով:

**7.6 Աղմուկ և թրթռում.**

Շինարարության ընթացքում աղմուկի և թրթռումների մակարդակը կապված է լինելու շինարարական տեխնիկայի, սարքավորումների և տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ: ՀՀ-ում աղմուկի մակարդակը կանոնակարգվում է համաձայն՝ ՀՀ Առողջապահության նախարարի 2002թ. մարտի 6-ի՝ «ԱՂՄՈՒԿՆ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐՈՒՄ, ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ» N2-III-11.3 ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ N2-III-11.3 ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ N 138 հրամանի և ՀՀ Քաղաքաշինության նախարարի 2014թ. մարտի 17-ի՝ ՀՀՇՆ 22-04-2014 «ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՂՄՈՒԿԻՑ» ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2001 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի N 82 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ N79-Ն հրամանի պահանջներին համապատասխան:

Բնակավայրերի և հասարակական հարակից տարածքների համար աղմուկի առավելագույն մակարդակը սահմանվել է 60-70դԲԱ, իսկ ձայնի համարժեք մակարդակները LաէԿՎ 45-55դԲԱ: Աղմուկի հիմնական աղբյուր են հանդիսանում շինտեխնիկան, մասնավորապես էքսկավատորը, որը կրելու է ժամանակավոր բնույթ: Էքսկավատորն աշխատելու է 10 ամիս աղմուկի մակարդակը՝ Laէկվ, կազմում է 85 դԲ: Գլդոնը տարածքի բարեկարգման ընթացքում՝ 6 ամիս աղմուկի մակարդակը՝ LAէկվ, կազմում է 80 դԲ: Աղմուկի մակարդակի հաշվարկը կատարվել է համաձայն ՀՀՇՆ 22-04-2014: Շինհրապարակը լինելու է ցանկապատված: Ցանկապատի նյութի խտությունը՝≤ 200կգ/մ2: Շինության պատերը ևս հանդիսանում են միաժամանակյա աղմուկից պաշպանման էկրան:

Պաշտպանիչ էկրանի արդյունավետությունը հաշվարկում են հետևալ բանաձևով.

Iաղ = 23 lg mէ – 10 դԲ, երբ m ≥ 200 կգ/մ2

Iաղ = 13 lg mէ – 13 դԲ, երբ m ≤ 200 կգ/մ2

Որտեղ m = Km – մակերեսի խտության էկվիվալենտն է,

m – մակերեսի խտությունն է, կգ/մ$^2$,

K –գործակից է , որը հաշվի է առնում պատնեշի խտությունը, որը

200կգ/մ2 K=1,3

M = 1,3 x 200=260

Լաղ = 13lg mէ -13 = 18,2 դԲ

Շինությունից դուրս աղմուկի մակարդակը կկազմի՝

LAտար = LAէկվ - Լաղ = 85– 18,2 = 66,8 դԲ

Հարակից բնակելի շինությունների պատերը, պատուհանները, մուտքի դռները, տանիքը, կանաչապատ տարածքը հադիսանում են որպես պաշպանիչ էկրան: Ձայնամեկուսացումը RAտր ըստ աղուսյակ 16-ի՝ կազմում է միջինը 50 դԲ:

LAտար = 66,8 – 50 = 16,8 դԲ

Գլդոնի համար՝

LAտար = LAէկվ - Lաղ = 80– 18,2 -50 = 11,8 դԲ

Մոտակա բնակելի շինությունների ներսում աղմուկի մակարդակն էքսկավատորի աշխատանքի դեպքում կկազմի 16,8 դԲ, ինչը նորմայից բավականին ցածր է: Աշխատանքներն իրականացվելու են միայն ցերեկային ժամերին:

**Թրթռում**

Թրթռման նորմաները բնակելի շենքերում, ըստ ՀՀ առողջապահության նախարարի 17 մայիսի 2006թ. N533-Ն որոշման, ներկայացված են ներքոնշյալ աղյուսակում:

Հասարակական շենքերում թրթռման (վիբրացիայի) թույլատրելի մակարդակները

| Միջին երկրաչափական հաճախականության օկտավային շերտեր, Հց | Թույլատրելի արժեքները X0, Y0 և Z0 առանցքներով | | | |
|---|---|---|---|---|
| | Թրթռա արագացում | | Թրթռա արագություն | |
| | մ/վրկ2 .10-3 | դԲ | մ/վ .10-3 | դԲ |
| 2 | 10,0 | 80 | 0,79 | 84 |
| 4 | 11,0 | 81 | 0,45 | 79 |
| 8 | 14,0 | 83 | 0,28 | 75 |
| 16 | 28,0 | 89 | 0,28 | 75 |
| 31,5 | 56,0 | 95 | 0,28 | 75 |
| 63 | 110,0 | 101 | 0,28 | 75 |
| Ճշգրտված ու համարժեքային ճշգրտված արժեքները և դրանց մակարդակները | 10 | 80 | 0,28 | 75 |
| Ոչ մշտական թրթռման (վիբրացիայի) համար թույլատրելի արժեքներին մտցվում է ուղղում - 10դԲ, իսկ բացարձակ արժեքները բազմապատկվում են 0,32-ով: Դպրոցների սենքերի, ուսումնական հաստատությունների, գրադարանների ընթերցասրահների համար մտցվում է ուղղում -3դԲ: | | | | |

Շինարարության ընթացքում թրթռման աղբյուր են հանդիսանում շինտեխնիկայի աշխատանքը, որոնց թրթռման մակարդակը ցածր է, և արդեն իսկ շինհրապարակի սահմաններում ալիքը մարում է և չի կարող ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի և մոտակա բնակելի տների վրա:

Համապատասխան բնապահպանական միջոցառումների կիրառման դեպքում շինարարական աղմուկի և թրթռումների մակարդակը շինհրապարակին հարակից տարածքում ավել կնվազեցնի ազդեցությունը և չի գերազանցի ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերը:

Աղմուկից և թրթռումներից պաշտպանվող շերտեր են ծառայում պատերը, ցանկապատը, երկշերտ պատուհանները կանաչ տարածքները: Շինարարության հրապարակում աշխատելու են տարբեր մեքենաներ և մեխանիզմներ, որոնց աղմուկի գումարային, ինչպես

նաև թրթռման մակարդակի ազդեցությունը հնարավոր է գերազանցի սահմանված նորմերը: Քանի որ աղմուկ առաջացնող մեխանիզմներն աշխատելու են ոչ միաժամանակ, դա լինելու է ոչ անընդմեջ, ժամանակավոր, ուստի աղմուկի մակարդակը կլինի նորմերի սահմաններում: Շինարարական աշխատանքները կատարվելու են ցերեկային ժամերին, տրանսպորտի շարժական ակտիվ գոտում/ կից ճանապարհ է/, հետևաբար շինհրապարակում աշխատող մեխանիզմների աղմուկը կտարալուծվի ընդհանուր աղմուկի մեջ:Բացի այդ շինարարակում աշխատանքները կատարվելու են ցանկապատված տարածքում, որը ևս կմեղմի աղմուկի և թրթռումների մակարդակը:

Հաշվի առնելով աղմուկ առաջացնող շինարարական տեխնիկայի աշխատանքների կարճաժամկետ բնույթը, աշխատակիցների վրա աղմուկի ազդեցությունը կրելու է կարճատև և ժամանակավոր բնույթ:

Շինարարության փուլում աղմուկի և թրթռումների մակարդակը նվազեցնելու նպատակով հաշվետվությունում նախատեսվում են միջոցառումներ:

**Շահագործման փուլում** աղմուկի և թրթռումների ազդեցություն չի նախատեսվում, ելնելով գործունեության բնույթից:

### 7.7 Արտակարգ իրավիճակներ.

Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում հնարավոր են արտակարգ իրավիճակների հնարավոր ռիսկերի առաջացում կապված՝

- հրդեհների առաջացման,
- բնական աղետների (երկրաշարժ, սողանք, ջրհեղեղ և այլն) և անբարենպաստ օդերևութաբանական պայմանների փոփոխության (քամու ուժեղացում, փոթորիկ),
- աշխատանքի ընթացքում հնարավոր վթարային իրավիճակների առաջացման հետ,
- հեղուկ նյութերի արտահոսքի և շահագործվող շինտեխնիկայի հետ:

Գործունեության տարածքում ըստ՝ «Հայր և Որդի Տիտիզյաններ» ՍՊԸ կողմից կատարված ուսումնասիրության արդյունքների՝ վտանգավոր երևույթներն ինչպիսիք են՝ կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ ուսումնասիրվող տեղամասում նախագծվող կառույցի վրա՝ բացակայում են: Կատարվել են գործիքային ստուգումներ՝ շերտերում առաձգական ալիքների տարածման արագությունների որոշման համար:

Համաձայն ուսումնասիրության արդյունքների՝ ուսումնասիրվող տեղամասում նախագծվող շինություն կառուցելու համար անհրաժեշտ է կառույցների հիմքերի փոսորակները բացելուց և նախագծային նիշերին հասնելուց հետո՝ ինժեներ-երկրաբանի կողմից իրականացնել հիմնափոսի զննում և տալ եզրակացություն:

Արտակարգ իրավիճակների հնարավոր ռիսկերը կանխարգելու համար կառուցապատումը պետք է կատարել, ելնելով «Արտակարգ իրավիճակների հնարավոր ռիսկերի գնահատման ապահովման, քաղաքաշինական համալիրի՝ սեյսմիկ պաշտպանության բնագավառի կարևոր նշանակություն ունեցող բազմաբնակարան բնակելի շենքերի շինարարական օբյետների հաստատված ճարտարապետաշինարարական նախագծերի, Քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020թ. դեկտեմբերի 28-ի N 102-Ն հրամանով հաստատված գործող նորմերով սահմանված երկրաշարժադիմացկունության հիմնական սկզբունքների՝ համապատասխան պարտադիր պահանջներից:

Արտակարգ իրավիճակների և անվտանգության ռիսկերը նվազեցնելու նպատակով նախատեսվում են բնապահպանական միջոցառումներ:

### 7.8 Մարդու առողջության վրա հնարավոր ազդեցությունները, գործոնները,

**ռիսկերը.** Գործունեության իրականացման ընթացքում հնարավոր են մարդու առողջությանը և աշխատանքի անվտանգությանը սպառնացող վտանգներ՝ կապված.

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ քաղաքաշինական, առողջապահական, բնապահպանական և այլ նորմերի խախտման,
- ոչ բավարար աշխատանքային պայմանների,
- թափոնների հավաքման, կուտակման, տեղափոխման,
- օգտագործվող հեղուկ նյութերի օգտագործման, պահպանման, տեղափոխման,
- շինտեխնիկայի շահագործման,
- արտակարգ իրավիճակների, աղմուկի առաջացման,
- շինարարության ընթացքում մարդու անվտանգությանը, առողջությանը սպառնացող այլ երևույթների հետ:

Մարդու առողջության և աշխատանքի անվտանգության ռիսկերը նվազեցնելու նպատակով նախատեսվում են բնապահպանական միջոցառումներ:

Շինաշխատանքները կկատարվեն պահպանելով շինարարության ժամանակացույցը և աշխատանքի անվտանգության կանոնները:

**7.10 Պատմամշակութային և բնության հուշարձաններ**.

Գործունեության ենթակա և հարակից տարածքներում բացակայում են պատմամշակութային արժեք ունեցող պատմամշակութային և բնության հուշարձանները: Կառուցապատման ենթակա տարածքը նախկինում կառուցապատված է եղել և չի առնչվում Էրեբունի վարչական շրջանում գոյություն ունեցող մշակութային հուշարձանների, ինչպես նաև հատուկ պահպանվող տարածքների հետ:

Ուստի հնարավոր ազդեցություններ վերջիններիս վրա չի կանխատեսվում:

Միաժամանակ շինարարական աշխատանքների ընթացքում որևէ հնագիտական շերտի կամ հուշարձանի հայտնաբերման դեպքում շինարարական աշխատանքներն անմիջապես դադարեցվելու և տեղեկացվելու են համապատասխան պետական մարմնին (Պատմական և մշակութային հուշարձանների պահպանության վարչությանը)՝ համաձայն ՀՀ գործող օրենսդրության հետագա գործողությունները կազմակերպելու համար: Շինարարական աշխատանքները հնարավոր կլինի շարունակել միայն համապատասխան թույլտվության տրամադրման դեպքում:

**7.11 Սոցիալական**.

Շինարարության ընթացքում բացվելու են նոր աշխատատեղեր: Շինարարության փուլում առավելագույն հերթափոխում աշխատելու է 40 մարդ, որից՝ 35 բանվոր, 5-ը ճարտարապետա-տեխնիկական և այլ անձնակազմ: Աշխատելու են 6 օր՝ 8 ժամյա հերթափոխային գրաֆիկով:

Շինարարության ընթացքում առաջանալու են հարակից տարածքի բնակիչների տեղաշարժի ժամանակավոր անհարմարություններ, որոնք հնարավոր է կանխարգելել կառավարման պլանով նախատեսված միջոցառումների կատարման միջոցով: Շինարարության ընթացքում այլ անձանց իրավունքների սահմանափակում կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ կարգի խախտում չի նախատեսվում:

Նախաձեռնողի կողմից գործունեության իրականացման ընթացքում կիրականացվի համայնքին աջակցություն՝ ֆինասական կամ այլ պարտավորությունների տեսքով, համայնքի հետ կմվող պայմանգրի հիման վրա: Նախատեսվում է մոտ 2.0մլն ՀՀ դրամի աջակցություն համայնքին:

**7.12 Լանդշաֆտ.**

Գործունեության իրականացումը չի առաջացնելու է լանդշաֆտի լրացուցիչ ծանրաբեռնվածություն, քանի որ գործունեությունն իրականացվելու նախկին արտադրական տարածքում, որտեղ առկա են շինություն և պարիսպ: Նախատեսվող շինությունը լինելու է ժամանակակից լուծումներով և նյութերով՝ ոչ բարձրահարկ, չի առաջացնի տեսողական խոչընդոտներ:

Նախատեսված շինարարական աշխատանքների ազդեցությունը տարածքի վրա կլինի նվազագույն՝ կրելով սահմանափակ և կարճատև բնույթ:

Դրանք հնարավոր կլինի նվազեցնել շինարարության փուլում՝ բնապահպանական կառավարման պլանով նախատեսված միջոցառումների արդյունքում:

**7.13 Բարեկարգում և կանաչապատում.**

Շինության կառուցման ավարտից հետո կատարվելու է տարածքի բարեկարգում, թափոնների և վտանգավոր նյութերի հեռացում, բոլոր ժամանակավոր կառույցների ապամոնտաժում, ճանապարհների կարգաբերում:

Կառուցապատման աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է նաև գործունեության ենթակա ազատ տարածքի՝ 12681մ2 մակերեսի վրա կատարել կանաչապատման աշխատանքներ: Կանաչապատման աշխատանքները կատարվելու են հիմնականում գազոնի տեսքով, քանի որ նախատեսվում հետագայում նշված տարածքի մի մասը ևս օգտագործել կառուցապատման նպատակով: Լրացուցիչ, ցանկապատին մոտ հատվածներում, նախատեսվում է տնկել թփեր՝ գիհի կազակական – 30 հատ, ասպիրակ վանհուտի – 20 հատ, սիրիական վարդ– 30 հատ: Խոտածածկի խնամքը կկատարվի հատուկ աշխատողի միջոցով, որը կունենա մասնագիտական համապատասխան որակավորում:

Կանաչապատման նպատակով օգտագործվող բուսահողը ձեռք է բերվելու ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ պայմանագրային հիմունքներով:

Ոռոգման նպատակով ջրապահանջը որոշվում է СНиП 2.04.02-84-ի համաձայն, այսինքն, 1մ$^2$ ոռոգման նպատակով անհրաժեշտ է 0,3-0,4լ ջուր, հետևաբար.

$$W = (M \times 0,4) \times m$$

Որտեղ, M – կանաչապատման ենթակա տարածքն է ըստ կանաչապատման տեսակային կազմի,

m – ոռոգման հաճախականությունը կախված սեզոնից և կլիմայական առանձնահատկությունից,

հետևաբար,

W = 12681մ$^2$*0,4*25= 126810 լ/ջուր կամ 126.8մ$^3$/տարի ջուր (տարվա կտրվածքով):

Կանաչապատ տարածքի ոռոգումը կատարվելու է բերովի ջրով, որը տարածք կբերվի ավտոցիստեռնով: Ոռոգման ջրի մատակարարումը կկատարվի համապատասխան լիցենզիա ունեցող ընկերության կամ անձի կողմից՝ պայմանագրային հիմուներով: Պայմանագիրը կկնքվի ընկերության հետ, որտեղ պետք է նշվի ջրի մատակարարման աղբյուրը, համապատասխան թույլտվությունը:

**Փակման կամ հետփակման փուլ**

Նախատեսվող գործունեության դադարեցումից կամ գործունեության իրականացման

ոչ նպատակահարմարությունից, այլ նպատակներով օգտագործելու հնարավորությունների բացակայությունից ելնելով առաջարկվում է.

- Նախապես տեղյակ պահել համայնքին:
- Ապամոնտաժել կառույցը:
- Հեռացնել առաջացող թափոնները, շինաղբը:
- Տեսակավորել ըստ թափոնատեսակների, լուծումները տալ ըստ ՀՀ-ում գործող օրենսդրությանը համապատասխան:
- Տարածքը բարելավել, բերել հնարավորինս նախկին տեսքի;

Փակման փուլի գործընթացը կատարվելու է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ համայնքի վերահսկողությամբ:




## 8.Շրջակա միջավայրի, մարդու առողջության վրա վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումները (Բնապահպանական կառավարման պլան)

Շրջակա միջավայրի պահպանման և վերջինիս բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցությունները մեղմելու նպատակով նախատեսվում են բնապահպանական մի շարք միջոցառումներ, որոնք կապված են լինելու կառուցապատման ընթացքում օդային ավազան արտանետումների, հողային և ջրային ռեսուրսների աղտոտման, կենսաբազմազանության, մարդու առողջության

պահպանման, ինչպես նաև տրանսպորտային միջոցների և սարքավորումների աշխատելու ընթացքում հողային և ջրային ռեսուրսների մեջ վտանգավոր նյութերի՝ յուղերի հնարավոր ներթափանցման, թափոնների կառավարման հետ: Հաշվետվությունում նշված բնապահպանական միջոցառումների, մոնիթորինգի ծրագիրը ներկայացվում է նաև Բնապահպանական կառավարման պլանով՝ աղյուսակային տեսքով:

**8.1 Օդային ավազան.**

Օդային ավազան արտանետումների քանակը մեղմելու, մթնոլորտային օդի որակի վրա հնարավոր ազդեցությունը կրճատելու նպատակով նախատեսվում է.

- օդի դրական ջերմաստիճանի դեպքում շինարարական հրապարակը, բացառությամբ վերանորոգվող և վերակառուցվող փողոցների, օրվա ընթացքում պարբերաբար ջրել՝ բացառելով կեղտաջրերի թափանցումը շինարարական հրապարակի սահմաններից դուրս,
- ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը տեղափոխել փոշու համար անթափանց ծածկոցներով ծածկված տրանսպորտային միջոցներով,
- ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը պահեստավորել փակ տարածքներում կամ ծածկել անթափանց թաղանթներով,
- շինարարական հրապարակից դուրս եկող տրանսպորտային միջոցների անվադողերը լվանալ,
- հղկման աշխատանքներ կատարելիս օգտագործել փոշու արտանետումը բացառող սարքեր և տեխնոլոգիաներ,
- շինարարական աղբը տեղափոխել դրանց հեռացման համար հատուկ հատկացված վայրեր և հատուկ սահմանված երթուղով:
- ցանկապատել շինարարական հրապարակները, շենքերը և շինությունները ծածկել շինարարությանը համապատասխան բարձրությամբ անթափանց թաղանթով,
- բացառել տարածքում թափոնների բաց այրումը,
- օգտագործվող տեխնիկան, սարքավորումները և տրանսպորտային միջոցներն օգտագործել միայն սարքին վիճակում,
- բացառել անսարք վիճակում գտնվող և արտահոսքեր ունեցող մեքենաների օգտագործումը: Այդ նպատակով իրականացվելու են պարբերաբար ստուգումներ:

Շահագործման փուլում օդային ավազանի վրա ազդեցություն չի լինելու:

**8.2 Հողային ռեսուրսներ.**

Հողային ռեսուրսնեն աղտոտումից պահպանելու համար նախատեսվում է.

- հողային աշխատանքների արդյունքում հանված հողային գրունտը մինչև օգտագործելը պահվելու է շինհրպարակում, առանձնացված վայրում՝ ծածկված անջրթափանց պոլիէթիլենային թաղանթով,
- շինարարական աշխատանքների ընթացքում հանված հողային գրունտի

մի մասն օգտագործվելու է տարածքի հարթեցման և բարեկարգման նպատակով, ավելցուկային գրունտը կտեղափոխվի համայնքապետարանի հետ համաձայնեցված վայր,

- շինարարական նյութերը կտեղադրվեն հատուկ տակդիրների կամ բետոնապատ մակերեսների վրա,
- շինարարական նյութերը կտեղադրվեն հատուկ տակդիրների կամ բետոնապատ մակերեսների վրա,
- նվազագույնի է հասցնել շինհրապարակում պահվող նյութերի և թափոնների քանակը,
- ավտոմեքենաները շինհրապարակից դուրս են գալու միայն մաքուր վիճակում՝ շրջակա տարածքը չաղտոտելու նպատակով,
- շինարարության փուլում օգտագործվող տրանսպորտային միջոցների լիցքավորումը և տեխնիկական սպասարկումը կկատարվի տարածքից դուրս՝ հատուկ մասնագիտացված կազմակերպություններում,
- այն հատվածներում, որոնք նախատեսված են շինարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկման և կայանման համար տեղադրվելու է ավազ կամ մանրախիճ կամ տեղադրվելու է բետոնասալ,

մեքենաներից և սարքավորումներից վառելիքի և/կամ քսայուղերի արտահոսքի դեպքում, փռված ավազը կամ մանրախիճը տեղափոխվելու է համապատասխան աղբավայր, այն փոխարինելով նորով,

- մեքենաների անիվների լվացումը կատարել անիվների լվացման հարթակում,
- բոլոր մեքենաների անիվների և թափքերի մաքրումը կատարել մինչև վերջիններիս շինհրապարակից դուրս գալը:

**Շահագործման փուլում** հողային ռեսուրսների վրա ազդեցություն չի նախատեսվում, ուստի բնապահպանական միջոցառումներ չեն նախատեսվում:

**8.3 Ջրային ռեսուրսներ.**

Գործունեության իրականացման շինարարության փուլում վրա հնարավոր բացասական ազդեցությունները մեղմելու կամ կանխարգելու նպատակով նախատեսվում է.

- փոշենստեցման համար ջրցանը կատարվելու է ըստ անհրաժեշտության, հնարավորինս չառաջացնելով մակերևութային հոսքեր,
- անձրևաջրերը և շինարարական հոսքաջրերը հեռացվելու են դեպի տարածքում տեղադրվող պարզարան,
- ջրցանման համար կօգտագործվի միայն տեխնիկական որակի ջուր և պարզարանում կուտակված ջուրը,
- տեխնիկական ջուրը բերվելու է մասնագիտացված և լիցենզիա ունեցող անձանց կամ ընկերությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով: Վերջիններիս հետ պայմանգրերը կկնքվեն շինարարական աշխատանքների սկսման փուլում,
- պարզարանում մեխանիկական նստեցման հետևանքով առաջացած տիղմը՝ որպես շինաղբ, ժամանակ առ ժամանակ կտեղափոխվի աղբավայր՝ պայմանագրային հիմունքներով,

- շինարարական տրանսպորտային միջոցների և սարքավորումների սպասարկումը կկատարվի համապատասխան մասնագիտացված կետերում,
- շինարարության համար անհրաժեշտ բետոնախառնուրդը բերվելու է պատրաստի վիճակում՝ բետոնախառնիչ մեքենաներով,
- բետոնանյութի լցվածությունն ապահովել այնպես, որպեսի բետոնանյութը տեղափոխման ժամանակ չթափվի ճանապարհներին՝ երթեկությանը չխոչընդոտելու և ասֆալտածածկը չվնասելու համար:

**Կեղտաջրեր.**

- շինարարության փուլում աշխատողներն օգտվելու են սանհանգույցներից կամ ժամանակավոր տեղադրվող 2 հատ բիոզուգարաններից՝ 1,5*2.2 մ չափերի:
- Բիոզուգարանների մաքրումը կատարվելու է մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:
- Շին.աշխատանքների ավարտից դրանք ապամոնտաժվելու են:

Շահագործման փուլում ջրամատակարարման համակարգ միացվելու է քաղաքային համապատասխան ցանցին, իսկ ջրահեռացման համակարգը տարածքում առկա կոյուղագծին:

**8.4.Կենսաբազմազնություն.**

**Շինարարության փուլ:** Գործունեության իրականացման ընթացքում բուսական և կենդանական աշխարհին հնարավոր ազդեցություններից զերծ պահելու համար նախատեսվում է.

• գործունեության և հարակից տարածքներում ՀՀ Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակների նոր պոպուլյացիաների կամ կենդանիների բնադրավայրերի հայտնաբերման դեպքում դադարեցնել շինարարական աշխատանքները և տեղեկացնել համապատասխան գերատեսչություններին,

• շինարարական աշխատանքներն իրականացնել բացառապես ցերեկային ժամերին՝ տարածքում հնարավոր գոյություն ունեցող որոշ կենդանիների կենսակերպի վրա ազդեցությունից խուսափելու համար:

**8.5 Թափոններ.**

Շինարարության փուլում թափոնների հնարավոր ազդեցությունները հողային և ջրային ռեսուրսների վրա մեղմելու նպատակով նախատեսվում է.

- շինարարության և շահագործման ընթացքում տարածքների սանիտարական պահպանումը և սպառման թափոնների հավաքումն իրականացնել համաձայն՝ ՀՀ առողջապահության նախարարի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 25-Ն հրամանի պահանջներին համապատասխան,
- շինարարական աշխատանքների ժամանակ գործունեության տարածքը և շրջակա միջավայրը զերծ պահել թափոնների կուտակումներից,
- շինարարական թափոնները՝ աղբ, բետոնյա մնացորդներ, պարկեր և այլն, կհավաքվեն անջրթափանց պոլիէթելենային պարկերի մեջ և կտեղափոխվեն համայնքի կողմից հատկացված վայր, քանի որ տարածաշրջանում չկան կազմակերպված սանիտարական աղբավայրեր, հնարավորության դեպքում

կհանձնվեն ճանապարհաշինարարական ընկերություններին՝ պայմանագրային հիմունքներով,

- մետաղական մասերը կառանձնացվեն և որպես մետաղի ջարդոն կհանձնվեն հատուկ մասնագիտացված կազմակերպություններին՝ պայմանագրային հիմունքներով,
- կառուցապատման փուլում կենցաղային աղբը կուտակվելու է համապատասխան տարողության պլաստմասե աղբահավաք տարողությունների մեջ,
- կենցաղային աղբի հեռացումը կատարվելու է կանոնավոր, ըստ անհրաժեշտության, մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով,
- հողային զանգվածը կուտակվելու է տարածքում և տեղափոխվելու է աղբավայր՝ համաձայն Երևանի քաղաքապետարանի կողմից տրված շինթույլտվությամբ ամրագրված պահանջներին,
- յուղոտված լաթերը կհանձնվեն մասնագիտական կազմակերպություններին համաձայն «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի պահանաջների,
- թափոնների տեղափոխումը կատարվելու է փակ ծածկով ապահովված բեռնատարներով կամ բեռնատարները ծածկվելու են անջրթափանց պոլիէթիլենային թաղանթով,
- բացառվելու է աղբի կուտակումը շիհրապարակից դուրս՝ կից գտնվող կից բնակելի և հասարակական տարածքներում:

**Շահագործման** փուլում կենցաղային աղբի կուտակման համար նախատեսվում է տեղադրել 3 հատ 1,5x1մ$^3$ տարողության պլաստմասե աղբամաններ, ինչպես նաև տեսակավորման աղբամաններ:

**8.6 Աղմուկի և թրթռումներ.**

Շինարարության փուլում աղմուկի և թրթռումների մակարդակը նվազեցնելու նպատակով նախատեսվում է.

- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,
- կառուցապատման տարածքում ձայնակլանիչ նյութերի և կոնստրուկցիաների կիրառում,
- շինարարական աշխատանքներում ներգրավել ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ,
- տրանսպորտային միջոցները և սարքերն օգտագործել սարքին վիճակում,
- պարբերաբար կստուգվեն և կկարգաբերվեն տրանսպորտային միջոցների շարժիչները,
- բացառել շինարարության ընթացքում օգտագործվող մեքենաների կայանումը բնակելի տների, այլ հասարակական շենքերի հարևանությամբ,
- օգտագործվող շին տեխնիկան և մեքենաները պետք է ապահոված լինեն համապատասխան խլացուցիչներով,
- պահպանել աղմուկի, վիբրացիայի, արտանետվող գազերի թույլատրելի նորմերը:

**Շահագործման փուլում** նախատեսվում է.

- օդափոխման և օդի լավորակման համակարգերում աղմուկի խլացուցիչների կիրառում,
- օգտագործվող ձայնամեկուսիչ, ձայնակլանիչ, թրթռամարիչ նյութերի օգտագործում՝ առաջնորդվելով համապատասխան մարմինների եզրակացություններով:

**8.7 Արտակարգ իրավիճակներ.**

Գործունեության իրականացման ընթացքում արտակարգ իրավիճակների հնարավոր ռիսկերը մեղմելու և դրանց առաջացումը կանխարգելելու նպատակով նախատեսվում է.

- կառույցների հիմքերի փոսորակները բացելուց և նախագծային նիշերին հասնելուց հետո՝ պարտադիր է ինժեներ-երկրաբանի կողմից հիմնափոսի զննումը և համապատասխան մասնագետի (երկրաբան) կողմից կազմված եզրակացությունը,
- կտեղադրվեն տեղեկատվական ցուցանակներ, որը ներառելու է շենքի նախագծողի, կապալառուի և այլ պատասխանատու անձանց (հեռախոսահամար), շինթույլտվության, շինարարության սկզբի և ավարտի վերաբերյալ տեղեկատվություն:
- շինհրապարակը կկազմակերպվի հակահրդեհային անվտանգության պաշտպանության կանոններին համապատասխան, տեղադրվելու է ջրի բաք՝ հրդեհամարման նպատակով,
- շինհրապարակն ապահովել հակահրդեհային կրակմարիչներով, տեսահսկման և ազդանշանային համակարգերով, հակահրդեհային միջոցառումների վահանակներով,
- շինհրապարակն, ինչպես նաև բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունները ժամանակ առ ժամանակ մաքրել թափոններից և աղբից,
- հակահրդեհային միջտարածությունները չօգտագործել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար,
- տեղադրել ձայնային ազդանշաններ, հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ՝ վթարների կանխարգելման համար,
- հեղուկ և վտանգավոր նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար,
- մթնոլորտային տեղումների, քամու ուժեղացման և այլ վտանգավոր երևույթների ժամանակ շինարարական աշխատանքները դադարեցվելու են:

**Շահագործման փուլ.** Շահագործման փուլում արտակարգ իրավիճակների դեպքում նախատեսվում է.

- ստորգետնյա հարկը ծառայելու է աշխատակիցների համար արտակարգ իրավիճակներում՝ որպես թաքստոց,

- շահագործման փուլում շենքն ապահոված է լինելու հակահրդեհային կրակմարիչներով, օդափոխության, ավտոմատ հրշեջ ազդանշանային՝ հակածխային, արտածման համակարգերով, էվակուացիոն ուղիներով և ելքերով:
- Պահպանել հակահրդեհային մուտքերը՝ հրշեջ մեքենաների շրջադարձի համար:
- Պահպանել Քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2024 թվականի փետրվարի 1-ի N 06-Ն հրամանով սահմանված սանիտարական նորմերը, ապահովել պահեստի սանիտարապաշտպանիչ գոտու՝ 50մ, ապրանքների և նյութերի պահետսավորումը:

**8.8 Մարդու առողջություն, Աշխատանքի անվտանգություն, կազմակերպում.**

Շինարարության փուլում աշխատողների աշխատանքի կազմակերպման և աշխատանքի անվտանգությունն ապահովելու համար նախատեսվում է.

- պահպանել ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերը, ՀՀ Առողջապահության նախարարի 2012թ. սեպտեմբերի 19-ի «Կազմակերպություններում աշխատողների սանիտարական կենցաղային սենքերի» N 2.2..8-003-12 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին թիվ 15-Ն հրամանի պահանջները,
- մինչև աշխատանքների սկիզբը բոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդներն անցնելու են հրահանգավորում՝ ըստ աշխատանքի անվտանգության կանոնների,
- բանվորական խմբերը լինելու են բազմապրոֆիլ և մասնագիտացված, անցկացվելու են ուսուցման և հրահանգավորման դասընթացներ, ստուգվելու են առասանիչ բանվորների գիտելիքները,
- աշխատողների համար ապահովել 1-ին բուժօգնության համար անհրաժեշտ դեղարկղիկով, անհատական և պաշտպանական միջոցներով (արտահագուստ, դիմակ, կոշիկ և այլն), էլեկտրական սարքավորումների հետ աշխատողները՝ դիէլեկտրիկ գորգով և ձեռնոցներով,
- ապահովել աշխատողների համար սանիտարական և հանգստի պայմաններով (հանգստի սենյակ, հանդերձարան, լվացարան և այլն)՝ անհրաժեշտ կահավորանքով (լվացարան, աթոռ, սեղան, ջեռուցիչ և այլն),
- շինհրապարակում և հարակից տարածքում տեղադրել աշխատանքային պայմանների, հնարավոր վտանգների մասին նախազգուշացնող նշաններ՝ տեղեկատվական և հակահրդեհային վահանակներ, վտանգն ազդարարող տեսողական պաստառներ, ճանապարհային երթևեկության, ինչպես նաև կողմնակի մարդկանց մուտքն արգելող նշաններ,
- վերահսկել աշխատող սարքավորումների պիտանելիությունը, բացառել գործնեության վայրում խոտանված բեռնիչ սարքերի կուտակումները,
- վերահսկել մեքենաների երթերը, հաջորդականությունը, բացառել մեքենաների կուտակումները,
- նվազագույնի հասցնել ճանապարհների խցանումներ առաջացնող գործողություններն՝ ընդհանուր երթևեկության խոչընդոտումը՝ հասարակական անվտանգությունն ապահովելու նպատակով,
- բեռնման-բեռնաթափման աշխատանքների ժամանակ օգտագործվող բեռնամբարձիչ մեքենաները, բեռնաբռնիչ սարքերը պետք է համապատասխանեն պետական ստանդարտների կամ տեխնիկական պայմանների պահանջներին, երթևեկության արագությունը շինհրապարակում չպետք է գերազանցի 5կմ/ժ,
- շինհրապարակի լուսավորությունը ապահովել հավասարաչափ՝ լուսավորության 2 լյուքսից ոչ պակաս, անհրաժեշտության դեպքում տեղադրել լրացուցիչ լուսավորման սարքեր՝ շինհրապարակի լուսավորության համար,
- շենքի ներսում եռակցման և ներկման աշխատանքները կատարել օդափոխության պայմաններում, հոսանքատար մասերի մեկուսացում,
- վարել տեխնիկական հսկողության ամփոփիչ և անհատական մատյաններ՝ տեխնիկական վերահսկողության իրականացման համար:

**Շահագործման փուլ.**

- Բացառել պահեստային շինությունում պայթունավտանգ նյութերի և առարկաների պահեստավորումը:

Շահագործման փուլում տարածքն ապահովված է լինելու հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի տեղաշարժվելու համար անհրաժեշտ պայմաններով՝ ՀՀՇՆ 1/–11.07.01-2006 շինարարական նորմերին համապատասխան:

Մասնավորապես նախատեսվում է.

- հաշմանդամների պահանջմունքին հարմարեցվող ունիվերսալ, շարժական տարրերով,
- վերգետնյա և ստորգետնյա անցումներ, թեքահարթակներ,
- տարածքի մուտքը կահավորված է լինելու տարածքի վերաբերյալ հաշմանդամների համար մատչելի տեղեկատվության տարրերով:

**8.9 Սոցիալական գործոններ**.

Շինարարության փուլում հնարավոր սոցիալական խնդիրներից խուսափելու համար նախատեսվում է.

• շինարարության ընթացքում բացվելու են նոր աշխատատեղեր,

• շինարարական աշխատանքները կատարել սահմանված ժամերին՝ ցերեկը,

• բացառել շինհրապարակից դուրս կենցաղային աղբի և թափոնների, մեքենաների կուտակումները,

• գործելու է բողոքների արձագանքման ընթացակարգը:

**8.10 Պատմամշակութային և բնության հուշարձաններ**.

Նախկինում տարածքը կառուցապատված է եղել և որևէ մշակութային հուշարձան տարածքում առկա չէ: Շինարարական աշխատանքների ընթացքում գործունեության ենթակա և մոտակա տարածքներում որևէ հնագիտական շերտի կամ հուշարձանի հայտնաբերման դեպքում շինարարական աշխատանքներն անմիջապես դադարեցնել և տեղեկացնել համապատասխան պետական մարմնին (Պատմական և մշակութային հուշարձանների պահպանության վարչությանը)՝ համաձայն ՀՀ գործող օրենսդրության հետագա գործողությունները կազմակերպելու համար: Շինարարական աշխատանքները հնարավոր կլինի շարունակել միայն համապատասխան թույլտվության տրամադրման դեպքում:

**8.11 Լանդշաֆտ**. Շինարարական աշխատանքների ավարտից հետո կատարվելու է տարածքի բարեկարգում.

- շինարարական սարքավորումներն ապամոնտաժվելու են,
- շինարարական հրապարակը մաքրվելու է թափոններից, վերականգնվելու է տարածքը,
- կատարվելու են գործունեության ենթակա տարածքի հարթեցման, բարեկարգման և կանաչապատման աշխատանքներ:

**8.12 Բարեկարգում և Կանաչապատում.**

Բարեկարգման և կանաչապատման նպատակով նախատեսվում է.

- կառուցապատումից ազատ տարածքի հարթեցում և բարեկարգում, ներբակային ճանապարհների կառուցում,
- կանաչ զանգվածի ոռոգում՝ բուսականության աճը և կպչողականությունն ապահովելու նպատակով:

Կանաչապատ տարածքի ոռոգումը կատարվելու է բերովի ջրով՝ ավտոցիստեռնով:

Ոռոգումը կատարվելու է կաթիլային եղանակով:

## 9. Մոնիթորինգ

Մոնիթորինգը՝ ԲԿՊ-ում նախանշված մեղմացնող միջոցառումների կատարման, դրանց արդյունավետությունը ստուգելու նպատակով Պատվիրատուի և հսկողություն իրականացնող այլ մարմինների կողմից նախատեսվող կանոնավոր հսկողություն է: Գործունեության իրականացման ընթացքում նախատեսվում է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանը կամ մեղմանն ուղղված մոնիթորինգ:

Այդ նպատակով նախատեսվում է.

- համապատասխան մասնագետների կողմից ստուգայցերի կատարում:
- Բնապահպանական, առողջության և աշխատանքային անվտանգության, տեխնիկական վերահսկողության իրականացում՝ ամենօրյա ռեժիմով,
- ՀՀ Կարմիր գրքում բուսատեսակների և ՀՀ Կարմիր գրքում կենդանիների բնադրավայրերի հայտնաբերման նպատակով մշտադիտարումների կատարում՝ համապատասխան մասնագետի ներգրավմամբ:
- Գործունեության տարածքում շինարարական աշխատանքների կատարման ժամանակ պարբերաբար կատարել մոնիթորինգ, առաջնորդվելով ՀՀ կառավարության 31.07.2014թ. «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N781-Ն որոշման պահանջներից՝ ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների պոպուլյացիաների հայտնաբերման և դրանց պահպանության նպատակով:
- Բոլոր աշխատողների աշխատանքի անվտանգության և արտակարգ իրավիճակների ընթացակարգի վերահսկում:
- Շինարարության կանոնները և անձնական պաշտպանության նորմերի պահպանման վերահսկում:
- Համապատասխան պայմանագրերի հիման վրա թափոնների տեղափոխման վերահսկում:
- Կապալառուի կողմից նախագծով նախատեսված բոլոր աշխատանքների պատշաճ իրականացման վերահսկում:
- Շին տեխնիկայի և մեքենաների համապատասխան տեխնիկական վիճակի պարբերաբար ստուգումներ՝ անսարք վիճակում գտնվող և արտահոսքեր ունեցող մեքենաների օգտագործումը բացառվելու նպատակով:
- Արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձի նշանակում, ով մշտապես ներկա կգտնվի շին. հրապարակում:
- Շինարարության իրականացման ժամանակացույցի պահպանման վերահսկում:
- Բարեկարգման և կանաչապատման աշխատանքների իրականացման վերահսկում, ապահովելով կանաչապատ տարածքի համապատասխանությունը կանաչապատման նախագծին:

Շինարարության իրականացման որակի չափանիշները հսկվելու են տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից, հատկապես ակտավորելով թաքնված աշխատանքների իրականացումը, գրանցելով վարման մատյանում:

Գործունեության իրականացման ընթացքում ՝ շինարարության փուլում բնապահպանական միջոցառումների և մոնիթորինգի համար նախատեսվում է ծախսել տարեկան 250.0 հազար դրամ:

**9.Բողոքների ընթացակարգ**

Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում կներդրվի բողոքների արձագանքման մեխանիզմ (ԲԱՄ), որը հիմնականում ուղղված կլինի շահագրգիռ կողմերի և ազդակիր հասարակության կողմից իրականացվող գործունեության վերաբերյալ դժգոհությունների ստացմանը, գնահատմանն ու լուծմանը:

Այդ նպատակով շինարարական տեղամասերում ապահովվելու է շինարարության վերաբերյալ տեղեկատվական ցուցանակների տեղադրումը, որը պարունակելու է՝ կառուցապատման օբյեկտի էսքիզային պատկերը, պատվիրատուի, կառուցապատողի կոնտակտային տվյալները, տեխնիկական վերահսկողություն իրականացնող անձանց և անվտանգության պատասխանատուի անուն(ները), հեռախոսահամարները ճարտարապետահատակագծային առաջադրանքի տրամադրման համարը, ամսաթիվը, շինթույլտվության համարը, շինարարական աշխատանքների սկիզբը և ավարատը, օբյեկտի հարկայնությունը, նպատակային նշանակությունը :

Բնապահպանական միջոցառումների և մոնիթորինգի համար ընկերությունը նախատեսում կատարել տարեկան 300.0 հազար դրամի ծախս:

## 10.Բնապահպանական միջոցառումների (բնապահպանական կառավարման) պլան

Աղյուսակ 9

| № | Գործունեության տարածքում ազդեցության ենթակա շրջակա միջավայրի բաղադրիչները և ազդող գործոնները | Մեղմող միջոցառման անվանումը | Միջոցառման իրականացման պատասխանատու | Վերահսկող |
|---|---|---|---|---|
| 1. | Օդային ավազան | Օդային ավազան արտանետումների հնարավոր ազդեցությունը կրճատելու և մեղմելու նպատակով նախատեսվում է.<br>• օդի դրական ջերմաստիճանի դեպքում շինարարական հրապարակը, բացառությամբ վերանորոգվող և վերակառուցվող փողոցների, օրվա ընթացքում պարբերաբար ջրել՝ բացառելով կեղտաջրերի թափանցումը շինարարական հրապարակի սահմաններից դուրս,<br>• ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը տեղափոխել փոշու համար անթափանց ծածկոցներով ծածկված տրանսպորտային միջոցներով,<br>• ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը պահեստավորել փակ տարածքներում կամ ծածկել անթափանց թաղանթներով,<br>• շինարարական հրապարակից դուրս եկող տրանսպորտային միջոցների | Կապալառու | «Ա ԿԼԱՍ ԼՈԳԻՍՏԻԿՍ»ՍՊԸ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | անվադողերը լվանալ,<br>• հղկման աշխատանքներ կատարելիս օգտագործել փոշու արտանետումը բացառող սարքեր և տեխնոլոգիաներ,<br>• շինարարական աղբը տեղափոխել դրանց հեռացման համար հատուկ հատկացված վայրեր և հատուկ սահմանված երթուղով:<br>• ցանկապատել շինարարական հրապարակները, շենքերը և շինությունները ծածկել շինարարությանը համապատասխան բարձրությամբ անթափանց թաղանթով,<br>• բացառել տարածքում թափոնների բաց այրումը,<br>• օգտագործվող տեխնիկան, սարքավորումները և տրանսպորտային միջոցներն օգտագործել միայն սարքին վիճակում,<br>• բացառել անսարք վիճակում գտնվող և արտահոսքեր ունեցող մեքենաների օգտագործումը: Այդ նպատակով իրականացվելու են պարբերաբար ստուգումներ:<br>Շահագործման փուլում օդային ավազանի վրա ազդեցություն չի լինելու: | | |
| **2.** | **Հողային ռեսուրսներ** | Գործունեության իրականացման հետևանքով հողային ռեսուրսներն աղտոտումից պահպանելու նպատակով նախատեսվում է.<br>• շինարարական աշխատանքների ընթացքում հանված հողային գրունտը օգտագործվելու է տարածքի հարթեցման և բարեկարգման նպատակով, | **Կապալառու** | **«Ա ԿԼԱՍ ԼՈԳԻՍՏԻԿՍ»ՍՊԸ** |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | • հողային աշխատանքների արդյունքում հանված հողային գրունտը մինչև օգտագործելը պահվելու է շինհրապարակում՝ ծածկված անջրթափանց պոլիէթիլենային թաղանթով,<br>• շինարարական նյութերը տեղադրել հատուկ տակդիրների կամ բետոնապատ մակերեսների վրա,<br>• -նվազագույնի հասցնել շինհրապարակում պահվող նյութերի և թափոնների քանակը,<br>• շինարարության փուլում օգտագործվող տրանսպորտային միջոցների լիցքավորումը և տեխնիկական սպասարկումը կատարել տարածքից դուրս՝ հատուկ մասնագիտացված կազմակերպություններում,<br>• այն հատվածներում, որոնք նախատեսված են շինարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկման և կայանման համար տեղադրվելու է ավազ կամ մանրախիճ կամ բետոնասալ,<br>• մեքենաներից և սարքավորումներից վառելիքի և/կամ քսայուղերի արտահոսքի դեպքում, փռված ավազը կամ մանրախիճը տեղափոխվելու է համապատասխան աղբավայր և այն փոխարինվելու է նորով,<br>• մեքենաների անիվների լվացումը կատարել անիվների լվացման հարթակում. | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | • բոլոր մեքենաների անիվների և թափքերի մաքրումը կատարվելու է մինչև շինհրապարակից վերջիններիս դուրս գալը: | | |
| 3. | **Ջրային ռեսուրսներ** | Գործունեության իրականացման ընթացքում ջրային ռեսուրսների վրա հնարավոր բացասական ազդեցությունները մեղմելու նպատակով նախատեսվում են.<br>• փոշենստեցման համար ջրցանը կատարվելու է ըստ անհրաժեշտության, հնարավորինս չառաջացնելով մակերևութային հոսքեր,<br>• անձրևաջրերը և շինարարական հոսքաջրերը հեռացվելու են դեպի տարածքում տեղադրվող պարզարան,<br>• ջրցանման համար կօգտագործվի միայն տեխնիկական որակի ջուր և պարզարանում կուտակված ջուրը,<br>• տեխնիկական ջուրը բերվելու է մասնագիտացված և լիցենզիա ունեցող անձանց կամ ընկերությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով: Վերջիններիս հետ պայմանգրերը կկնքվեն շինարարական աշխատանքների սկզման փուլում,<br>• պարզարանում մեխանիկական նստեցման հետևանքով առաջացած տիղմը՝ որպես շինաղբ, ժամանակ առ ժամանակ կտեղափոխվի աղբավայր՝ պայմանագրային հիմունքներով,<br>• շինարարական տրանսպորտային միջոցների և սարքավորումների | **Կապալառու** | **«Ա ԿԼԱՍ ԼՈԳԻՍՏԻԿՍ»ՍՊԸ** |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | սպասարկումը կկատարվի համապատասխան մասնագիտացված կետերում,<br>• շինարարության համար անհրաժեշտ բետոնախառնուրդը բերվելու է պատրաստի վիճակում՝ բետոնախառնիչ մեքենաներով,<br>• բետոնանյութի լցվածությունն ապահովել այնպես, որպեսի բետոնանյութը տեղափոխման ժամանակ չթափվի ճանապարհներին՝ երթեկությանը չխոչընդոտելու և ասֆալտածածկը չվնասելու համար:<br>• Կեղտաջրեր.<br>• շինարարության փուլում աշխատողներն օգտվելու են սանհանգույցներից կամ ժամանակավոր տեղադրվող 2 հատ բիոզուգարաններից՝ 1,5*2.2 մ չափերի:<br>• Բիոզուգարանների մաքրումը կատարվելու է մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:<br>• Շին.աշխատանքների ավարտից դրանք ապամոնտաժվելու են:<br>Շահագործման փուլ. ջրամատակարարման համակարգ միացվելու է քաղաքային համապատասխան ցանցին, իսկ ջրահեռացման համակարգը տարածքում առկա կոյուղագծին: | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 4 | **Կենսաբազմազանություն** | Գործունեության իրականացման ընթացքում բուսական և կենդանական աշխարհին հնարավոր ազդեցություններից զերծ պահելու համար նախատեսվում է.<br>• գործունեության և հարակից տարածքներում ՀՀ Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակների նոր պոպուլյացիաների կամ կենդանիների բնադրավայրերի հայտնաբերման դեպքում դադարեցնել շինարարական աշխատանքները և տեղեկացնել համապատասխան գերատեսչություններին,<br>• շինարարական աշխատանքներն իրականացնել բացառապես ցերեկային ժամերին՝ տարածքում հնարավոր գոյություն ունեցող որոշ կենդանիների կենսակերպի վրա ազդեցությունից խուսափելու համար: | **Կապալառու** | **«Ա ԿԼԱՍ ԼՈԳԻՍՏԻԿՍ»ՍՊԸ** |
| 5 | **Թափոններ** | Շինարարության փուլում թափոնների հնարավոր ազդեցությունները հողային և ջրային ռեսուրսների վրա մեղմելու նպատակով նախատեսվում է.<br>• շինարարության և շահագործման ընթացքում տարածքների սանիտարական պահպանումը և սպառման թափոնների հավաքումն իրականացնել համաձայն՝ ՀՀ առողջապահության նախարարի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 25-Ն հրամանի պահանջներին համապատասխան,<br>• շինարարական աշխատանքների ժամանակ գործունեության տարածքը և | **Կապալառու** | **«Ա ԿԼԱՍ ԼՈԳԻՍՏԻԿՍ»ՍՊԸ** |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | շրջակա միջավայրը զերծ պահել թափոնների կուտակումներից,<br>• շինարարական թափոնները՝ բետոնյա մնացորդներ, պարկեր և այլն, կհավաքվեն անջրթափանց պոլիէթելենային պարկերի մեջ և կտեղափոխվեն համայնքի կողմից հատկացված վայր, քանի որ տարածաշրջանում չկան կազմակերպված սանիտարական աղբավայրեր, հնարավորության դեպքում կհանձնվեն ճանապարհաշինարարական ընկերություններին՝ պայմանագրային հիմունքներով,<br>• մետաղական մասերը կառանձնացվեն և որպես մետաղի ջարդոն կհանձնվեն հատուկ մասնագիտացված կազմակերպություններին՝ պայմանագրային հիմունքներով,<br>• կառուցապատման փուլում կենցաղային աղբը կուտակվելու է համապատասխան տարողության պլաստմասե աղբահավաք տարողությունների մեջ,<br>• կենցաղային աղբի հեռացումը կատարվելու է կանոնավոր, ըստ անհրաժեշտության, մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով,<br>• հողային զանգվածը կուտակվելու է տարածքում և տեղափոխվելու է աղբավայր՝ համաձայն Երևանի քաղաքապետարանի կողմից տրված շինթույլտվությամբ ամրագրված պահանջներին, | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | • յուղոտված կիանձնվեն մասնագիտական կազմակերպություններին «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան,<br>• թափոնների տեղափոխումը կատարվելու է փակ ծածկով ապահովված բեռնատարներով կամ բեռնատարները ծածկվելու են անջրթափանց պոլիէթիլենային թաղանթով,<br>• բացառվելու է աղբի կուտակումը շիհրապարակից դուրս՝ կից գտնվող կից բնակելի և հասարակական տարածքներում:<br>**Շահագործման** փուլում կենցաղային աղբի կուտակման համար նախատեսվում է տեղադրել 3 հատ 1,5x1մ³ տարողության պլաստմասե աղբամաններ, ինչպես նաև տեսակավորման աղբամաններ: | | |
| 5 | **Աղմուկ և թրթռում** | Շինարարության ընթացքում աղմուկի և թրթռումների մակարդակը նվազեցնելու նպատակով նախատեսվում է.<br>• շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,<br>• կառուցապատման տարածքում ձայնակլանիչ նյութերի և կոնստրուկցիաների կիրառում,<br>• շինարարական աշխատանքներում ներգրավվելու են ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ, | **Կապալառու** | **«Ա ԿԼԱՍ ԼՈԳԻՍՏԻԿՍ»ՍՊԸ** |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | • տրանսպորտային միջոցները և սարքերն օգտագործել սարքին վիճակում,<br>• պարբերաբար կստուգվեն և կարգաբերվեն տրանսպորտային միջոցների շարժիչները,<br>• բացառել շինարարության ընթացքում օգտագործվող մեքենաների կայանումը բնակելի տների, այլ հասարակական շենքերի հարևանությամբ,<br>• օգտագործվող շին տեխնիկան և մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով,<br>• պահպանել աղմուկի, վիբրացիայի, արտանետվող գազերի թույլատրելի նորմերը:<br>Շահագործման փուլում նախատեսվում է.<br>- օդափոխման և օդի լավորակման համակարգերում աղմուկի խլացուցիչների կիրառում,<br>- օգտագործվող ձայնամեկուսիչ, ձայնակլանիչ, թրթռամարիչ նյութերի օգտագործում՝ համապատասխան մարմինների եզրակացությունների հիման վրա: | | |
| **6** | **Արտակարգ իրավիճակներ** | Գործունեության իրականացման ընթացքում արտակարգ իրավիճակների հնարավոր ռիսկերը մեղմելու և դրանց առաջացումը կանխարգելելու նպատակով նախատեսվում է.<br>• կառույցների հիմքերի փոսորակները բացելուց և նախագծային նիշերին հասնելուց հետո՝ պարտադիր է ինժեներ-երկրաբանի կողմից հիմնափոսի զննումը և համապատասխան մասնագետի(երկրաբան) կողմից կազմված եզրակացությունը, | **Կապալառու** | **«Ա ԿԼԱՍ ԼՈԳԻՍՏԻԿՍ»ՍՊԸ** |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | • կտեղադրվեն տեղեկատվական ցուցանակներ, որը ներառելու է շենքի նախագծողի, Կապալառուի և այլ պատասխանատու անձանց (հեռախոսահամար), շինթույլտվության, շինարարությոան սկզբի և ավարտի վերաբերյալ տեղեկատվություն:<br>• շինհրապարակը կկազմակերպվի հակահրդեհային անվտանգության պաշտպանության կանոններին համապատասխան,<br>• շինհրապարակն ապահովվել հակահրդեհային կրակմարիչներով, տեսահսկման և ազդանշանային համակարգերով, հակահրդեհային միջոցառումների վահանակներով,<br>• շինհրապարակն, ինչպես նաև բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունները ժամանակ առ ժամանակ մաքրել թափոններից և աղբից,<br>• հակահրդեհային միջտարածությունները չօգտագործել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար,<br>• տեղադրել ձայնային ազդանշաններ, հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ՝ վթարների կանխարգելման համար,<br>• հեղուկ և վտանգավոր նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար,<br>• մթնոլորտային տեղումների, քամու ուժեղացման և այլ վտանգավոր երևույթների ժամանակ շինարարական աշխատանքները դադարեցվելու են:<br>**Շահագործման փուլ.**<br>• ստորգետնյա հարկը ծառայելու է աշխատակիցների համար ապաստարան արտակարգ իրավիճակներում՝ պաշտպանական նպատակներով,<br>• շահագործման փուլում շենքն ապահովված է լինելու հակահրդեհային կրակմարիչներով, օդափոխության, ավտոմատ հրշեջ ազդանշանային՝ հակածխային, արտածման համակարգերով, էվակուացիոն ուղիներով և ելքերով: | | |
| 7 | **Աշխատանքի կազմակերպում, մարդու առողջություն և անվտանգություն** | Շինարարության փուլում աշխատողների աշխատանքի կազմակերպման և աշխատանքի անվտանգությունն ապահովելու համար նախատեսվում է.<br>• պահպանել ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերը, ՀՀ Առողջապահության նախարարի 2012թ. սեպտեմբերի 19-ի «Կազմակերպություններում աշխատողների սանիտարական կենցաղային սենքերի» N 2.2..8-003-12 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին թիվ 15-Ն հրամանի պահանջները, | **Կապալառու** | **«Ա ԿԼԱՍ ԼՈԳԻՍՏԻԿՍ»ՍՊԸ** |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | • մինչև աշխատանքների սկիզբը բոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդներն անցնելու են հրահանգավորում՝ ըստ աշխատանքի անվտանգության կանոնների,<br>• բանվորական խմբերը լինելու են բազմապրոֆիլ և մասնագիտացված, անցկացվելու են ուսուցման և հրահանգավորման դասընթացներ, ստուգվելու են առասանիչ բանվորների գիտելիքները,<br>• աշխատողների համար ապահովել 1-ին բուժօգնության համար անհրաժեշտ դեղարկղիկով, անհատական և պաշտպանական միջոցներով (արտահագուստ, դիմակ, կոշիկ և այլն), Էլեկտրական սարքավորումների հետ աշխատողները՝ դիէլեկտրիկ գորգով և ձեռնոցներով,<br>• ապահովել աշխատողների համար սանիտարական և հանգստի պայմաններով (հանգստի սենյակ, հանդերձարան, լվացարան և այլն)՝ անհրաժեշտ կահավորանքով (լվացարան, աթոռ, սեղան, ջեռուցիչ և այլն),<br>• շինհրապարակում և հարակից տարածքում տեղադրել աշխատանքային պայմանների, հնարավոր վտանգների մասին նախազգուշացնող նշաններ՝ տեղեկատվական և հակահրդեհային վահանակներ, վտանգն ազդարարող տեսողական պաստառներ, ճանապարհային երթևեկության, ինչպես նաև կողմնակի մարդկանց մուտքն արգելող նշաններ, | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | • վերահսկել աշխատող սարքավորումների պիտանելիությունը, բացառել գործնեության վայրում խոտանված բեռնիչ սարքերի կուտակումները,<br>• վերահսկել մեքենաների երթերը, հաջորդականությունը, բացառել մեքենաների կուտակումները,<br>• նվազագույնի հասցնել ճանապարհների խցանումներ առաջացնող գործողություններն՝ ընդհանուր երթևեկության խոչընդոտումը՝ հասարակական անվտանգությունն ապահովելու նպատակով,<br>• բեռնման-բեռնաթափման աշխատանքների ժամանակ օգտագործվող բեռնամբարձիչ մեքենաները, բեռնաբռնիչ սարքերը պետք է համապատասխանեն պետական ստանդարտների կամ տեխնիկական պայմանների պահանջներին, երթևեկության արագությունը շինհրապարակում չպետք է գերազանցի 5կմ/ժ,<br>• շինհրապարակի լուսավորությունը ապահովել հավասարաչափ՝ լուսավորության 2 լյուքսից ոչ պակաս, անհրաժեշտության դեպքում տեղադրել լրացուցիչ լուսավորման սարքեր՝ շինհրապարակի լուսավորության համար,<br>• շենքի ներսում եռակցման և ներկման աշխատանքները կատարել օդափոխության պայմաններում, հոսանքատար մասերի մեկուսացում,<br>• վարել տեխնիկական հսկողության ամփոփիչ և | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | անհատական մատյաններ՝ տեխնիկական վերահսկողության իրականացման համար:<br>**Շահագործման փուլ.**<br>Շահագործման փուլում տարածքն ապահոված է լինելու հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի տեղաշարժվելու համար անհրաժեշտ պայմաններով՝ ՀՀՇՆ 1/–11.07.01-2006 շինարարական նորմերին համապատասխան:<br>Մասնավորապես նախատեսվում է.<br>• հաշմանդամների պահանջմունքին հարմարեցվող ունիվերսալ, շարժական տարրերով,<br>• վերգետնյա և ստորգետնյա անցումներ, թեքահարթակներ,<br>• տարածքի մուտքը կահավորված է լինելու տարածքի վերաբերյալ հաշմանդամների համար մատչելի տեղեկատվության տարրերով: | | |
| **8** | **Սոցիալական գործոններ** | Շինարարության փուլում հնարավոր սոցիալական խնդիրներից խուսափելու համար նախատեսվում է.<br>• շինարարության ընթացքում բացվելու են նոր աշխատատեղեր,<br>• շինարարական աշխատանքները կատարել սահմանված ժամերին՝ ցերեկը, | **Կապալառու** | **«Ա ԿԼԱՍ ԼՈԳԻՍՏԻԿՍ»ՍՊԸ** |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | • բացառել շինհրապարակից դուրս կենցաղային աղբի և շինաղբի, մեքենաների կուտակումները,<br>• գործելու է բողոքների արձագանքման ընթացակարգը: | | |
| 9 | **Պատմամշակության հուշարձաններ, հնագիտական շերտ** | Շինարարական աշխատանքների ընթացքում գործունեության ենթակա և մոտակա տարածքներում որևէ հնագիտական շերտի կամ հուշարձանի հայտնաբերման դեպքում շինարարական աշխատանքերն անմիջապես դադարեցնել և տեղեկացնել համապատասխան պետական մարմնին (Պատմական և մշակության հուշարձանների պահպանության վարչությանը)՝ համաձայն ՀՀ գործող օրենսդրության հետագա գործողությունները կազմակերպելու համար: Շինարարական աշխատանքները հնարավոր կլինի շարունակել միայն համապատասխան թույլտվության տրամադրման դեպքում: | **Կապալառու** | **«Ա ԿԼԱՍ ԼՈԳԻՍՏԻԿՍ»ՍՊԸ** |
| **10.** | **Լանդշաֆտ** | Շինարարական աշխատանքների ավարտից հետո կատարվելու է տարածքի բարեկարգում.<br>- շինարարական սարքավորումներն ապամոնտաժվելու են,<br>• շինարարական հրապարակը մաքրվելու է թափոններից, վերականգնվելու է տարածքը,<br>• կատարվելու գործունեության ենթակա տարածքի հարթեցման, բարեկարգման և | **Կապալառու** | **«Ա ԿԼԱՍ ԼՈԳԻՍՏԻԿՍ»ՍՊԸ** |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | կանաչապատման աշխատանքներ: | | |
| 11 | **Բարեկարգում և կանաչապատում** | Նախատեսվում է գործունեության ենթակա ազատ տարածքում և հարակից տարածքներում կատարել բարեկարգման և կանաչապատման աշխատանքներ՝ համաձայն Երևանի համայնքապետարանի հետ համաձայնեցված կանաչապատման նախագծի: Նախատեսվում է.<br>- կառուցապատումից ազատ տարածքի հարթեցում և բարեկարգում, ներքակային ճանապարհների կառուցում,<br>• կանաչ զանգվածի ոռոգում՝ բուսականության աճը և կպչողականությունն ապահովելու նպատակով: | **Կապալառու** | **«Ա ԿԼԱՍ ԼՈԳԻՍՏԻԿՍ»ՍՊԸ** |

**10.Մշտադիտարկման (մոնիթորինգի) միջոցառումներ**

Աղյուսակ 10

| հհ | Գործողություն | Նվազեցնող միջոցառումներ | Մոնիթորինգի Վայրը | Իրականացման ձևը | Ժամանակամիջոց | Մոնիթորինգ Կատարող/ Վերահսկող |
|---|---|---|---|---|---|---|
| **1** | Շինարարության ընթացքում օդային ավազան, ջրային և հողային ռեսուրսների մեջ | • Փոշու և այլ օդի աղտոտիչների (CO, NOx և այլն) արտանետումների որակական և քանակական չափաքանակների պարբերական | Գործունեության ենթակա տարածքում | Ստուգայցեր, գործիքային ստուգումներ | Շինարարության փուլում՝ ամենօրյա:<br>Փոշենստեցումը օդի դրական ջերմաստիճանի դեպքում՝ օրը 2-3 | **Կապալառու «Ա ԿԼԱՍ ԼՈԳԻՍՏԻԿՍ» ՍՊԸ** |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | վտանգավոր նյութերի և կեղտաջրերի ներթափանցման բացառելուն ուղղված | վերահսկում:<br>• Հողային ռեսուրսների որակի ուսումնասիրությունների կատարում,<br>• կեղտաջրերի հեռացման՝ բիոզուգարանի տեղադրում: | Գործունեության տարածքում | Տեսողական դիտարկումներ, մասնագետի կողմից ստուգայցեր | անգամ<br>Պարբերաբար՝ ոչ ուշ 3 ամիսը մեկ հաճախականությամբ | **Համապատասխան գերատեսչության տեսչական մարմիններ:** |
| **2.** | **Կենսաբազմազանում.** | Բուսականության և կենդանիների մոնիթորինգ՝ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների և կենդանիների բնադրավայրերի հայտնաբերման համար: | Գործունեության տարածքում | Տեսողական դիտարկումներ, մասնագետի կողմից ստուգայցեր: | Գործունեության սկզբում | **Կապալառու Անհրաժեշտության դեպքում համապատասխան մասնագետի ներգրավում** |
| **3** | **Արտակարգ իրավիճակներ և աշխատանքի անվտանգություն** | • Աշխատողների իրազեկում՝ աշխատանքի անվտանգության և արտակարգ իրավիճակների ընթացակարգի մասին,<br>• շինարարության կանոնների և անձնական պաշտպանության նորմերի խստիվ | Գործունեության իրականացման ենթակա տարածքում | Իրազեկումներ և ստուգումներ<br>Ստուգայցեր | Պարբերաբար<br>ամենօրյա ռեժիմով, | **Կապալառու**<br>**«Ա ԿԼԱՍ ԼՈԳԻՍՏԻԿՍ» ՍՊԸ** |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | պահպանություն,<br>• բնապահպանական, առողջության և աշխատանքային անվտանգության տեխնիկական վերահսկողություն՝<br>• հակահրդեհային պահանջների ապահովում՝ ՀՀՇՆ 21-01-2014 «Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգության» նորմերին համապատասխան: | Շինհրապարակ | Ստուգայցեր | | **Համապատասխան գերատեսչությունների տեսչական մարմիններ** |
| | **Շինարարական նորմերի պահպանում** | Ամբողջ շինարարության ընթացքում վերահսկվելու են շինարարության որակի չափանիշները ՝ | | Ստուգայցեր | Հաճախակի | **Տեխնիկական վերահսկողություն իրականացնող մարմին** |
| | **Աղմուկ, թրթռում** | Աղմուկի և թրթռումների մակարդակի բարձրացմանն ուղղված միջոցառումներ: | Գործունեության իրականացման ենթակա տարածքում | Թրթռաարագության (վիբրոարագության) կամ թրթռաարագացման (վիբրոարագացման) համարժեքային (ըստ էներգիայի) ճշգրտված մակարդակի | Պարբերաբար | **«Ա ԿԼԱՍ ԼՈԳԻՍՏԻԿՍ» ՍՊԸ Համապատասխան գերատեսչությունների տեսչական** |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | որոշում գործիքային չափման միջոցով: | | **մարմին** |
| **3** | **Նյութեր** | Շինանյութերի գնում արտոնագրված մատակարարներից: | Լիցենզավորված կազմակերպություններ պահեստներ | Մատակարարման ընթացքում | Շինարարության փուլում՝ պայմանագրերի առկայություն | **Կապալառու** **«Ա ԿԼԱՍ ԼՈԳԻՍՏԻԿՍ» ՍՊԸ** |
| **4** | **Թափոն** | -Թափոնների հաշվառում, հեռացում՝ ՀՀ կառավարության 2006 թվականի սեպտեմբերի 14-ի՝ N 1343-Ն որոշման 6-րդ կետի պահանջներին համապատասխան:<br>-Թափոնների կանոնավոր տեղափոխում: | Գործունեության ենթակա տարածքից | Թափոնների հաշվառման մատյանների առկայություն<br>Համապատասխան պայմանագրերի հիման վրա: | Տարին 1 անգամ<br>Գործունեությանի րականացման ընթացքում | **Կապալառու** **«Ա ԿԼԱՍ ԼՈԳԻՍՏԻԿՍ» ՍՊԸ** |
| **5** | **Շինտեխնիկա և տրանսպորտային միջոցներ** | • Շին տեխնիկայի և մեքենաների համապատասխան տեխնիկական վիճակի վերահսկում,<br>• ամբարձիչի ժամանակի և բեռնունակության օգտագործման վերահսկում: | Շինհրապարակ | Ստուգայցեր<br>Դիտողական ստուգումներ, | Շինարարարական աշխատանքների կատարման ընթացքում<br>Պարբերաբար | **Կապալառու** **«Ա ԿԼԱՍ ԼՈԳԻՍՏԻԿՍ» ՍՊԸ** |
| 6 | **Կանաչապատում և բարեկարգում** | • տարածքի կանաչապատման աշխատանքների և կանաչապատման ծրագրի | Գործունեության տարածք | Դիտողական ուսումնասիրություն | Շինարարական աշխատանքների ավարտից հետո | **Կապալառու** |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | համապատասխանությ ան վերահսկում,<br>- կանաչ զանգվածի վիճակի՝ կպչողականության ուսումնասիրություն և ծառերի աճն ապահովվելու նպատակով մշտադիտարկում: | | | | **«Ա ԿԼԱՍ ԼՈԳԻՍՏԻԿՍ» ՍՊԸ Համապատասխան գերատեսչության տեսչական մարմիններ** |
| 7 | **Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում բողոքների արձագանքում** | • Բողոքների, դիմումների առկայություն | Գործունեության վայր | Դիմումների, արձագանքում | Շինարարության ընթացքում | **Կապալառու**<br><br>**«Ա ԿԼԱՍ ԼՈԳԻՍՏԻԿՍ» ՍՊԸ** |

## 11. Հանրային քննարկումներ.

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» 2014 թվականի հունիսի 21-ի ՀՕ- 110-Ն Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին (Փոփոխությունները 2023 թվականի մայիսի 3) Օրենքի և ՀՀ կառավարության 1325-Ն և ՀՀ կառավարության 28 դեկտեմբերի 2023 թվականի «Հայաստանի հանրապետության կառավարության 2014թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 2343-Ն որոշմամբ սահմանված պահանջների՝**«Ա ԿԼԱՍ ԼՈԳԻՍՏԻԿՍ»ՍՊԸ-ի** կողմից պահեստային շինության կառուցապատման վերաբերյալ հանրային ծանուցումը և քննարկումները կատարվել են Երևան քաղաքի Էրբուբի վարչական շրջանում՝ վարչական ղեկավարի նստավայրում:

Հանրային քննարկմանը մասնակցել են Երևանի քաղաքապետարանի ներկայացուցիչը, գործունեություն իրականացնող ընկերության ներկայացուցիչները: Ներկայացվեց նախատեսվող գործունեության նախագծային լուծումները և գործունեության իրականացման հետևանքով շրջակա միջավայրի բաղադրիչների և մարդու առողջության վրա հնարավոր ազդեցությունները, դրանց մեղմանն ու կանխարգելմանն ուղղված միջոցառումները:

Գործունեությունը նախատեսվում է իրականացնել 21.07.2022թ. Երևանի քաղաքապետարանի կողմից տրված՝ ՝ N ՆԹ-3787-25, տրված՝ 23.05.2025թ նախագծման թույլտվության հիման վրա, պահպանելով նախագծման թույլտվությամբ ամրագրված բոլոր նորմերը:

Հաշվետվությունում ներառվել են հանրային քննարկման ընթացքում բարձրացված բոլոր դիտարկումները:

Քննարկման արդյունքում Երևան քաղաքի Ավագանին 2025թ. № 17/122145-25 որոշմամբ՝ նախագծի իրականացման վերաբերյալ համայնքը տվել է իր նախնական համաձայնությունը, որն էլ վկայում է նախատեսվող գործունեության համապատասխանությունը համայնքի հեռանկարային զարգացման ծրագրերին: Հանրային քննարկման ընթացքում չեն հնչել գործունեության վերաբերյալ բացասական կարծիքներ, սահմանված ժամկետում չեն ներկայացվել նաև շահագրգիռ հանրության և ազդակիր բնակչության կարծիքներ, դիտողություններ և առաջարկություններ: Հավելվածներ 9.10 :

Ավագանու որոշումը, նախնական համաձայնությունը, հիմնավորում է նախագծային փաստաթղթով նախատեսվող գործունեության համապատասխանությունը Երևան քաղաքի հաստատված հեռանկարային զարգացման հիմնադրույթային փաստաթղթին: Տարածքին վերաբերող հիմնադրութային փաստաթղթերը հաստատվում են տեղական կառավարման մարմինների կողմից: Մինչև գործունեությունն սկսելը և տարածքի սեփականաշնորհումը՝ դիտարկվում է նաև հողի նպատակային և գործառնական նշանակությունը, հնարավոր փոփոխությունը: Տվյալ դեպքում տարածքը նախկինում եղել է արտադրական, այժմ գործունեության իրականացման համար ևս մնում է արտադրական:

## 12. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության կազմման իրավական հիմքերը

**«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման եվ փորձաքննության մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին (2023թ.մայիսի 3)**– Կարգավորում է նախատեսվող գործունեության իրականացման ընթացակարգը՝ դիտարկելով շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումների, անդրսահմանային և շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության ոլորտի

հասարակական հարաբերությունները: Ներառում է նախատեսվող գործունեության 2 կատեգորիա՝ «Ա», «Բ»՝ ըստ շրջակա միջավայրի վրա նվազող ազդեցության աստիճանի: Համաձայն օրենքի իրականացվում է նախատեսվող գործունեության փորձաքննություն, որից հետո տրվում է եզրակացություն:

«**Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք ՀՕ-121 (ընդունված 1994թ.)**-կարգավորում է մթնոլորտային օդի պահպանության իրավական և կազմակերպական հիմքերը' ուղղված մթնոլորտային օդի որակի պահպանությանը, ինչպես նաև մարդու առողջության և շրջակա միջավայրի համար բարենպաստ մթնոլորտային օդի որակի ապահովման նպատակով' մթնոլորտային օդի պահպանության բնագավառում հասարակական հարաբերությունները»:

**«Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք (2006)**-սահմանում է հատուկ պահպանվող տարածքներն, ինչպես նաև դրանց կառավարման ընթացակարգերը: Հայաստանի Հանրապետությունում բնության հատուկպահպանվող տարածքներն ըստ կատեգորիայի դասակարգվում են' պետական արգելոցի, ազգային պարկի, պետական արգելավայրի և բնության հուշարձանի:

**«Պատմության եվ մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության եվ օգտագործման մասին» ՀՀ օրենք (1998թ.)** - Պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններն են՝ պետական հաշվառման վերցված պատմական, գիտական, գեղարվեստական կամ մշակութային այլ արժեք ունեցող կառույցները, դրանց համակառույցներն ու համալիրները՝ իրենց գրաված կամ պատմականորեն իրենց հետ կապված տարածքով, դրանց մասը կազմող հնագիտական, գեղարվեստական, վիմագրական, ազգագրական բնույթի տարրերն ու բեկորները, պատմամշակութային և բնապատմական արգելոցները, հիշարժան վայրերը՝ անկախ պահպանվածության աստիճանից:

**«Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (1999թ.)**-Ապահովում է բուսական տեսակների (ֆլորայի) և դրանց առաջացրած համակեցությունների (բուսականության) բազմազանության, աճելավայրերի և էկոհամակարգերի հավասարակշռվածության վրա մարդու բացասական ներգործության կանխարգելումը: Իրականացնում է բուսական աշխարհի, դրա գենոֆոնդի և ցենոֆոնդի բազմազանության, աճելավայրերի պահպանության քանակական և որակական, բուսական աշխարհի շարունակական օգտագործման և վերարտադրության գիտականորեն հիմնավորված ապահովումը, բուսական աշխարհի օգտագործման հարաբերությունների կարգավորումը, բուսական աշխարհի պահպանության և օգտագործման բնագավառում օգտագործողների իրավունքների պաշտպանությունը և պարտականությունների կատարումը:

**«Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (2000թ.)**-Սահմանում է ՀՀ տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը: Նախատեսում է գենոֆոնդի և տեսակային բազմազանության պահպանության, պաշտպանության, բնականոն վերարտադրության ապահովումը, կենդանիների բնակության միջավայրի ամբողջականության խախտման կանխումը, կենդանական տեսակների և դրանց պոպուլյացիաների ու համակեցությունների ամբողջականության, կենդանիների միգրացիայի ուղիների պահպանությունը, կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործման հարաբերությունների կարգավորումը, կենդանական աշխարհի պահպանության և օգտագործման բնագավառներում օգտագործողների իրավունքների

պաշտպանությունն ու պարտականությունների կատարումը:

**«ՀՀ հողային օրենսգիրք» (2001թ.)** - Սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսավարման տարբեր կազմակերպա-իրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը: Կարգավորում է հողային պաշարների կառավարման, տիրապետման, օգտագործման և տնօրինման բնագավառում պետական քաղաքականության ուղղությունների սահմանումը, հողային հարաբերությունները կարգավորող օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի ընդունումն ու դրանց կատարման վերահսկողությունը, հողային ֆոնդի` ըստ նպատակային նշանակության, հողատեսքերի և գործառնական նշանակության դասակարգումը, հողի մոնիթորինգի, հողաշինարարության, հողերի հետազոտմանն ուղղված գործունեության լիցենզավորման միասնական սկզբունքների սահմանումը և այլն:

**«Թափոնների մասին» ՀՀ օրենքը** (2004 թ.)-սահմանում է թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, ինչպես նաև բնական ռեսուրսների, մարդու կյանքի և առողջության վրա թափոններից առաջացող բացասական ազդեցությունների կանխարգելման համար իրավական և տնտեսական հիմքերը:

**«ՀՀ ջրային օրենսգիրք» (2002)** - Նպատակը երկրի ջրային ռեսուրսների պահպանության, ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման միջոցով քաղաքացիների և տնտեսության կարիքների բավարարման և ապագա սերունդների համար ջրային ռեսուրսների պահպանման համար իրավական հիմքերի ապահովումն է:

**«Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին» ՀՀ օրենք (2008թ.)**- Սահմանվում է հողերի արդյունավետ օգտագործման և պահպանման, հողային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման խնդիրները, ձևերը, վերահսկողություն իրականացնող մարմինները, ստուգող և ստուգվող անձանց իրավունքներն ու պարտականությունները, ստուգումների իրականացման կարգերը: Սույն օրենքի գործողությունը տարածվում է ՀՀ հողային ֆոնդում առկա բոլոր հողամասերի օգտագործման և պահպանության վրա` անկախ դրանց նպատակային նշանակությունից, սեփականության և (կամ) օգտագործման իրավունքի սուբյեկտներից:

**«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք (1998)**-կարգավորում է շինարարական գործընթացի կազմակերպումը, պահանջում է նախատեսվող գործունեության մասին տեղակատվության հրապարակումը և նախագծման փուլում հանրության մասնակցությունը:

**«Քաղաքաշինության Բնագավառում Իրավախախտումների Համար պատասխանատվության մասին» ՀՀ Օրենքը (28 ապրիլի 1999 թ.)** -Սույն օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետությունում իրավաբանական անձանց քաղաքաշինության բնագավառում իրավախախտումների համար պատասխանատվության ենթարկելու իրավական հիմքերը` քաղաքաշինական գործունեության բոլոր փուլերում քաղաքացիների, հասարակության ու պետության շահերը պաշտպանելու, օրենսդրական ակտերի, ստանդարտների ու կանոնների պահանջների կատարումն ապահովելու նպատակով:

**«Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքը (2011թ.)-** կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում աղբահանության և սանիտարական

մաքրման հետ կապված հարաբերությունները, սահմանում է աղբահանության և սանիտարական մաքրման գործընթացի կազմակերպման սկզբունքները, աղբահանության վճարը, դրա դրույքաչափերը, վճարողների շրջանակը, նրանց իրավունքները և պարտականությունները, վճարման կարգը, պատասխանատվությունը չվճարելու, պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար, տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման կարգը աղբահանության և սանիտարական մաքրման կազմակերպման բնագավառներում:

## ՀՀ կառավարության որոշումներ

**ՀՀ** կառավարության 28 դեկտեմբերի 2023 թվականի «Հայաստանի հանրապետության կառավարության 2014թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 2343 - Ն որոշում:
ՀՀ կառավարության 29 հունվարի 2010թ. «ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին» N72-Ն որոշում:
ՀՀ կառավարության 29 հունվարի.2010թ. «ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին» N71-Ն որոշում:
ՀՀ կառավարության 31.07.2014թ.՝ ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N781-Ն որոշում:
ՀՀ կառավարության 8 սեպտեմբերի 2011 թվականի «Հողի բերրի շերտի օգտագործման կարգը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 19-ի N 1622-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու և 2001թվականի ապրիլի 12-ի N 286-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N1396-Ն որոշում:
ՀՀ կառավարության 14 օգոստոսի 2008թ. «Հայաստանի հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» N 967-Ն որոշում:
ՀՀ կառավարության 15 մարտի 2007թ. «ՀՀ Պետական սեփականություն համարվող և օտարման ոչ ենթակա պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին» N 385-Ն որոշում:
18.ՀՀ կառավարության 08.02.2018թ. «Բնակավայրերի կանաչ գոտիների չափերին եվ տեսակային կազմին ներկայացվող պահանջները սահմանելու եվ հայաստանի հանրապետության կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի ո 1318-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 108- Ն որոշում:
ՀՀ կառավարության 12 ապրիլի 2018թ. «Նոր կառուցվող բնակելի բազմաբնակարան շենքերում, ինչպես նաև պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության և էներգաարդյունավետության տեխնիկական կանոնակարգը սահմանելու մասին» N426-Ն որոշում:

**Գրականություն**


1. СП.485.13130.2021:

2. ՀՀ Առողջապահության նախարարի 2002թ. մարտի 6-ի՝ «ԱՂՄՈՒԿՆ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐՈՒՄ, ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ» N2-III-11.3 ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ N2-III-11.3 ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ N 138 հրամանի և ՀՀ Քաղաքաշինության նախարարի 2014թ. մարտի 17-ի՝ ՀՀՇՆ 22-04-2014 «ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՂՄՈՒԿԻՑ» ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2001 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի N 82 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ N79-Ն հրաման:

3. Արտակարգ իրավիճակների նախարարի 2021թ. մարտի 31-ի 372-Ն հրամանով հաստատված ՀՀ տարածքի սեյսմիկ վտանգի, սեյսմիկ գոտևորման քարտեզների և Քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020թ. դեկտեմբերի 28-ի թիվ 102-Ն հրամանով հաստատված «ՀՀՇՆ 20.04_ Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմեր»:

4. ՀՀՇՆ 20.04-2020 «Երկրաշարժադիմացկունության շինարարության նախագծման նորմեր»:

5.ՀՀ քաղաքաշինության նախարարության ՀՀՇՆ 22-01-2024 «Շինարարական կլիմայաբանություն» նորմատիվային փաստաթուղթ:

6.ՀՀՇՆ I-2.03-03 «ՀՀ պետական քաղաքաշինական կադաստր» շինարարական նորմերի հաստատման մասին քաղաքաշինության նախարարի 2003թ հունիսի 5-ի. 38-Ն հրաման:

7. ՀՀՇՆ 31-04.01-2024 «ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԵՆՔԵՐԻ ՈՒ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՆԻՏԱՐԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԳՈՏԻՆԵՐ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ:

8. ՀՀ Առողջապահության նախարարի 2012թ. սեպտեմբերի 19-ի «Կազմակերպություններում աշխատողների սանիտարական կենցաղային սենքերի» N 2.2..8-003-12 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին թիվ 15-Ն հրամանի

9.ՀՀ Առողջապահության նախարարի 2012թ. սեպտեմբերի 19-ի «Կազմակերպություններում աշխատողների սանիտարական կենցաղային սենքերի» N 2.2..8-003-12 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին թիվ 15-Ն հրաման:

10. Երևանի քաղաքի 2024-2028թթ. զարգացման հնգամյա ծրագիր:

11.ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական /https://armstat.am/file/Map/MARZ_01.pdf/ կայք:

**Հավելված 1.**

Տարածքի պետական ռեգիստրը, սեփականության իրավունքի վկայականը, պետական ռեգիստրը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

# ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

Կադաստրի կոմիտե

Սույն վկայականով հաստատվում է 21 ապրիլի 2025 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

## 1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)

«Ա ԿԼԱՍ ԼՈԳԻՍՏԻԿՍ» ՍՊԸ

## 2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Երևան, Էրեբունի Արին-Բերդի փողոց 25

## 3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Անշարժ գույքի առուվաճառքի և գրավի հիփոթեքի պայմանագիր 26.12.2024թ. թիվ 27886, Վճարման հանձնարարագրի անդորրագիր N002445

## 4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 01-005-0561-0013

Մակերեսի չափը (հա)՝ 2.7151

Նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման եւ այլ արտադրական նշանակության

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Արդյունաբերական օբյեկտների

Գրանցված իրավունքի տեսակը՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

**ՎԿԱՅԱԿԱՆ N 21042025-01-0084, գաղտնաբառ՝ HZPFMNIRSBIK**

*Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով*

Էջ 1/2

## 5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

1) Նպատակային նշանակությունը՝ արտադրական
2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

| Հ/Հ | Կադաստրային ծածկագիր | Տեսակ | Մակերես | Գրանցված իրավունքի տեսակ |
|---|---|---|---|---|
| 1 | 01-005-0561-0013-001 | պարիսպ | 9.6 քմ, 19.2 խ.մ. | ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |

**Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ**

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ ԱՐՄԵՆ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ
Զբաղեցրած պաշտոնը՝ Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման անշարժ գույքի ավագ ռեգիստր

**ՎԿԱՅԱԿԱՆ N 21042025-01-0084, գաղտնաբառ՝ HZPFMNIRSBIK**

*Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով*

Կադաստրի կոմիտե

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

ՊԵՏԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻՑ ՔԱՂՎԱԾՔ առ 2024-11-06

## «Ա ԿԼԱՍ ԼՈԳԻՍՏԻԿՍ»
## Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ)

| | |
|---|---|
| Գրանցման համար | 278.110.1420181 |
| Հիմնադրման տարի | 2024 |
| Գրանցման ամսաթիվ | 2024-11-06 |
| Գործունեության ժամկետ | Անժամկետ |
| Կարգավիճակ | Իրավաբանական անձի լուծարման գործընթացում գտնվելու կամ գործունեության (գոյության) դադարման մասին պետական միասնական գրանցամատյանում տեղեկություններ գրառված չեն: |
| Իրավաբանական անձի ծածկագիր (ՁԿԴ) | 55076030 |
| Հարկ վճարողի հաշվառման համար (ՀՎՀՀ) | 00531785 |
| Սոցիալական վճարների պարտավորությունների անձնական հաշվի քարտի համար (Ապահովադրի ծածկագիր) | 44510181 |
| Էլ. փոստ | ruben.gyuzalyan@gmail.com |
| Կայք | - |
| **Գտնվելու վայրը** | |
| Հասցե | ԱԹՈՅԱՆ Փ. / Տ / 83 ԷՐԵԲՈՒՆԻ 0041 ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ |
| Հեռախոս | - |
| **Գործադիր մարմնի ղեկավար** | |
| Անուն Ազգանուն | ՌՈՒԲԵՆ ԳՅՈՒԶԱԼՅԱՆ ՌՈՒԴՈԼՖԻ |
| Անձնագրային տվյալներ | AR0531951 2017-12-07 009 |
| Հասցե | ԱԹՈՅԱՆ Փ. / Տ / 83 ԷՐԵԲՈՒՆԻ 0041 ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ |

Հավելված 2
Ճարտարապետահատակագծային առաջադրանք

Ձև N 1-2

PM2E-CF78-929C-73AB

Փաստաթղթի վավերականության ստուգումն ու էլեկտրոնային բնօրինակի ներբեռնումը հնարավոր է իրականացնել https://verify.e-gov.am կայքում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ
